616.5
Ф-87

1908 р.

06 SEP 2013
30 JUL 2010

Հրատարակութիւն Թիֆլիսի քաղաքային Աղեքսանդրեան հիւանդանոցի բժիշկների

616.5
Ֆ-87
170

Պրօֆ. ԱԼՖՐԵԴ ՖՈՒՐՆԻԷ

N 70
36784

# ԲԺՇԿՎՈ՞ՒՄ Է ԱՐԴԵՕՔ ՍԻՖԻԼԻՍԸ

*Թարգմանեց*
*բժ. Արամ Մխիթարեանց*

ԹԻՖԼԻՍ
Արագատիպ տպարան Գրոց Հրատարակչական Ընկերութեան
1908

6319

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻՂԱԲ:Ր
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սիֆիլիս հիւանդութիւնը մարդկային սերնդի ամենազարհուրելի թշնամիներից մէկն է. նա չի խնայում ոչ աղքատին, ոչ էլ հարուստին։

Ո՜րքան բարոյական տանջանքներ է քաշում ամէն մէկը, ով որ վարակվում է սիֆիլիսով. իսկ այդ բարոյական տանջանքները նա քաշում է շնորհիւ այն հանգամանքի, որ առհասարակ կարծիք է կազմվել, որ սիֆիլիսն անբուժելի է։ Այդ պատճառով Թիֆլիսի քաղաքային Աղէքսանդրեան հիւանդանոցի բժիշկները իրանց պարտքը համարեցին հրատարակել հայերէն և վրացերէն լեզուով պրոֆեսոր Ֆուռնիէի գրուածքը «Բժշկվում է արդեօք սիֆիլիսը»։ Պրոֆ. Ֆուռնիէն, իր բազմամեայ սիֆիլիսի ուսումնասիրութեան և մեծ պրակտիկայի հիման վերայ, ունենալով մեծ ստատիստիկական նիւթ, եկաւ այն եզրակացութեան, որ սիֆիլիսը որոշ պայմաններում միանգամայն բժշկվում է։ Այդ պայմանները, ինչպէս երևում է այս գրքից, գլխաւորապէս նրանումն են կայանում, որ պէտք է բժշկել սիֆիլիսը երկար ժամանակ և ընդմիջումներով։

Այս պատճառով առաջարկելով հայ և վրացի ընթերցող հասարակութեան այս օգտաւէտ գրքոյկը, իսկ կարծում եմ, որ վերոյիշեալ հիւանդանոցի բժիշկները կատարել են իրանց բարոյական պարտքը։

Թիֆլիսի Քաղաքային Աղէքսանդրեան հիւանդանոցի վերատեսուչ

Բժշկապետ Ս. Խատամանեան.

1908 թ.

# ԲԺՇԿՎՈ՞ՒՄ Է ԱՐԴԵՕՔ ՍԻՖԻԼԻՍԸ

Բժշկվո՞ւմ է սիֆիլիսը։

Ահա մի հարց, որ տալիս է բժշկին անպատճառ ամէն մէկը, որ հիւանդանում է սիֆիլիսով։ Եւ ահա ինչու։ Բանը նրանումն է, որ սիֆիլիսը ամենավատ համբաւն ունի։ Հէնց իր գոյութիւնով նա գցում է բոլորին «սարսափի և յուսահատութեան մէջ»։ Եւ հասկանալի է, որ ում գլխին այդ դժբաղդութիւնը գայ, նա կաշխատէ թեթևացնել իր վշտի ծանրութիւնը, միամտել։ Նա կըփափագի լսել բժշկից բացատրութեան և մխիթարութեան մի խօսք։ Այդ խօսքը նորա համար շատ հարկաւոր է։ Եւ ահա ես վերցնում եմ գրիչս հէնց այդ նպատակով և ցանկանում եմ պարզել այն, ինչու մասին շատ անգամ երկիւղով և յուսով ինձ հարցուփորձ են արել ամէնքը, ով որ հիւանդացել է սիֆիլիսով։

Անում եմ այդ մի առանձին ուրախութիւնով.— և ահա ինչու համար։ Որովհետև ես ունեմ արագ, վըճռական և որոշ պատասխան։ Այդ պատասխանը կարող է այս րօպէին խրախուսել և մխիթարել սիֆիլիսի այդ բոլոր չարչարվող և տառապող զոհերին, որոնց սրտերում միայն յուսահատութեան լացն ու հառաչանքն է։ Ինչու չօգնել նոցա հէնց առաջին խօսքից և չարտաս-

նել հէնց սկզբից խրախուսանքի և մխիթարութեան այդ խօսքերը. ինչ հարկաւոր է սպասել, եթէ կարելի է այդ անել առանց յետաձգութեան։ Եւ ահա ինչու հէնց այժմ կըպատասխանեմ դրված հարցին, իսկ յետոյ արդէն հոգս կըքաշեմ, որ հաստատեմ և ապացուցանեմ իմ խօսքերիս ճշմարտութիւնը։

Ուրեմն, լսեցէք.—այո՛, սիֆիլիսը բժշկվումէ։ Այո, նա բժշկվում է և որոշ պայմաններում, անցնում է առանց մի որևէ հետևանքի։ Ինչ պայմաններում, ես այդ մասին իսկոյն կասեմ։ Այո, նա բժշկելի է և ոչ միայն կորչում են նորա այն նշանները, որոնք ներկայումս զարգացել են, բայց և ամբողջովին ինքն անհետանում է ընդ միշտ և վերջնականապէս, ապագայի բոլոր ժամանակներում։ Եւ ոչ միայն ինքը հիւանդը անձնապէս ազատվում է և խուսափում սիֆիլիսից առաջացած վտանգներից և դժբախտութիւններից, այլ և կարող են այդ նշանները չարտայայտվել և չազդել հիւանդի կնոջ և երեխաների առողջութեան վրայ։

Աւելին կասեմ.—բոլոր հիւանդութիւններից (ի հարկէ, լուրջ, որովհետև խօսքը միայն դոցա մասին է այստեղ) սիֆիլիսը բժշկվում է աւելի լաւ, աւելի հեշտ և աւելի մեծ յոյսով։ Եւ ինչու այդպէս է։ Որովհետև մենք ունինք նորա դէմ կռվելու համար երկու հրաշալի միջոցներ, ամենաուժեղ և ամենաճիշտը այն բոլորից, որ կայ մեր դեղերի պաշարի մէջ։

*
* *

Մի փոքր չեղվենք։ Այս գրքոյկը գրուած է ոչ-բժիշկների համար և կարող է պարծենալ մի արժանաւորութիւնով (գուցէ, ուրիշ արժանաւորութիւններ բացակայ են) և ունի բուն մասնագիտական բժշկական



աշխատութիւնների առանձնայատկութիւնը։—Նա ոչինչ չի պահում և ասում է միայն լոկ ճշմարտութիւնը։

Ինչպէս բժշկական գիտութեան ամէն մի մասնագիտական ձեռնարկ,—այս գրքոյկը պատմում է իրերի իսկական էութիւնը ոչինչ ծածկելով, ոչ հեռացնելով միջից մի բան և ոչ էլ մեղմացնելով։

Այս գրքոյկը ձգտում է ցոյց տալ, թէ ինչ կարելի է սպասել բժշկութիւնից կռվելով սիֆիլիսի դէմ և դարձնելով նորան անվնաս, և նոյնպէս ինչի են հասել մինչև օրս այդ ուղղութիւնով։ Նա կընկարագրի մեզ հետևաբար և անաչառ կերպով հակասիֆիլիտիկական բժշկութեան յաղթութիւնները, բայց և կից այդ բանին, նա չի լռի անյաջողութիւնների մասին, և չի ծածկի մեզանից մեդալի նաև հակառակ երեսը։

Մի խօսքով այս գրքոյկը ասելու է ճշմարտութիւնը և այդ իմ հայեացքով լաւ է և տեղին է միշտ ու ամեն տեղ, իսկ բժշկականութեան մէջ ես առաւել։ Հէնց այս դէպքում ճշմարտութիւնը այն նշանակութիւնը ունի, որ կարող է խրախուսել մեր հիւանդներին։ Իմանալով այդ, նոքա կըկենդանանան հոգով։

*
* *

«Սիֆիլիսից բժշկուելը»։—Ի՞նչ է այդ նշանակում։ Ինչպէս պէտք է այդ հասկանալ։ Բոլոր խիղճ ունեցող մարդկանց համար (մենք այստեղ դիմում ենք միայն այդ տեսակներին) այդ նշանակում է.—անվտանգ դարձնել իրան հիւանդութեան հնարաւոր սպառնալիքներից, ոչ միայն անհատական և անձնական տեսակէտից, այլև անվնաս դարձնել իրան և զրկվել հնարաւորութիւնից վնասել իւր հիւանդութիւնով ուրիշներին, իւր մօտ բարեկամներին, այսինքն իւր ապագայ կնոջը և սպա-

վող սերնդին։ Ուրիշ խօսքով,—բժշկվել սիֆիլիսից, այդ նշանակում է՝ հասնել այսպիսի երկու տեսակ հետևանքի.—ապահովացնել իւր անձը սիֆիլիսից անհատական տեսակէտից, նոյնպէս և պաշտպանել նրանից իւր ընտանիքը, կնոջը և երեխաներին։

Ուրեմն, մեզ հարկաւոր է պարզել հարցը երեք տեսակէտից կամ աւելի ճիշտն ասած՝ քննել հետևեալ երեք հարց, որոնք որքան որ հետաքրքիր են, այնքան էլ կարևոր։

1) Բժշկելի՞ է սիֆիլիսը անհատական տեսակէտից և կարող է արդեօք սիֆիլիսով վարակվածը պաշտպանել իրան անձնապէս այն վտանգներից, որոնք սպառնում են իրան իւր մէջ գտնվող հիւանդութիւնից։

2) Կարելի՞ է բժշկել սիֆիլիսը այնպէս, որ յետոյ, այն ժամանակ, երբ սիֆիլիս ունեցողը ամուսնանում է, չարտայայտուի նա կնոջ առողջութեան վրայ։

3) Կարելի է արդեօք, հիւանդանալով սիֆիլիսով, նրա առաջն առնել, որ չը տարածվին այդ հիւանդութեան վնասակար հետևանքները ժառանգականութեան վրայ։

Այո՛: Միանգամից կըպատասխանեմ այդ երեք հարցերին։ Այդ կարելի է այժմ ասել, իսկ յետոյ քննել մանրամասն ամեն մի հարցն առանձին։ Այո, սիֆիլիսը բժշկելի է այդ բառի բուն մտքով։ Բայց միայն պէտք է ասել, որ նա անցնում է և անյայտանում, երբ մենք կատարում ենք որոշ պայմաններ։ Այդ պայմաններից երկուսը ամենաէականն են, որոնց վերայ իսկոյն պէտք է մատնանիշ անել։

Ահա նոքա։ Կատարեալ բժշկութեան համար հարկաւոր է 1) բժշկուել, 2) վարել առողջ կեանք։ Կանգ առնենք այդ բանի վերայ աւելի մանրամասն։



# I. ՍԻՖԻԼԻՍԸ ՀԱՐԿԱՒՈՐ Է ԲԺՇԿԵԼ

Ես չեմ յանձն առնում վճռել, թէ կարող է սիֆիլիսը ինքն իրան անյայտանալ և կարող է օրգանիզմը, ղեկավարվելով միայն բնութեան ոյժերով, ազատվել այդ հիւանդութիւնից, որը արմատ է գցել նորա մէջ։ Բայց ես մի բան հաստատ իմանում եմ և ինչպէս սովորեցրել է ինձ փորձառութիւնը՝ սիֆիլիսը և նորա հիւանդ նշանները կարելի է անվնաս դարձնել արտաքին ոյժերով, այսինքն կանոնաւոր, երկարատև, յաճախ կրկնվող և վերանորոգվող բժշկութիւնով։

Այն ժամանակ հիւանդութեան արտայայտութիւնները դադարում են երևալ, հիւանդութիւնը խորասուզվում է լռութեան մէջ, պահ է մտնում և անխօս է լինում, կարծես երբէք և չէ եղել։ Եւ այս բոլորը, ամբողջ այս մեծ յաջողութիւնը ստացվում է շնորհիւ երկու միջոցի, որոնք զուր չէ, որ հրաշագործի համբաւ ունին։ Այո, իսկ և իսկ հրաշագործներ են, այստեղ ոչ մի չափազանցութիւն չկայ։ Սնդիկը և եօդական կալին—ահա մեր բժշկական գանձերի մարգարիտները։ Ամէն օր կարելի տեսնել, ինչպէս նոքա հիանալի կերպով գործը գլուխ են բերում և հիւանդութեան նշանները ոչնչացնում։ Եւ այդ անում են այնպէս, որ մինչև անգամ բժիշկները, որոնք սովոր են այդ ամենին, չեն կարող զսպել իրանց հիացմունքը և հրճուանքը, երբ տեսնում են այսպիսի մաքուր գործ։ Ամեն քայլափոխում կարելի է նկատել, ինչպէս նոքա ցրիւ են բերում և սրբում, այսպէս ասած, մաշկի մակերևոյթից ցիր ու ցան արած ցաները. սպիացնում են և սպի են դարձնում մեծ և արագ ու ուժեղ կերպով այս ու այն կողմ սողացող խոցերը. թեթևացնում են և դադարեցնում յա-

մաս ցաւերը, որոնք առաջները ոչ մի կերպով չէին կարող ենթարկուել ուրիշ բժշկութեան. նոյնպէս յաճախ այդ միջոցները լոյս են տալիս կոյրերին, կենդանացնում են անշարժներին, պարզեցնում միտքը, որը կարծես յաւիտեան մառայլացել էր։ Մի խօսքով այդ դեղերը կեանք և առողջութիւն են ցանում այնտեղ, որտեղ, ըստ երեւոյթին, չըկայ արդէն ոչ մի յոյս. որտեղ ամեն ինչ կորած և դատապարտուած էր խորտակման։ Այս բոլորի մասին և ասաց Ռիկօրը՝ «սիֆիլիսի նշանների բժշկութեան մէջ ամեն ինչ կարելի է, մինչև անգամ անկարելին»։

Առ այժմս բաւական է այդ մասին, սակայն, շուտով մեզ հարկաւոր կլինի վերադառնալ նոյն առարկային։

## II. ՍԻՖԻԼԻՍ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՌՈՂՋ ԿԵԱՆՔ ՎԱՐԵԼ

Ինչպէս և ամեն տեղ, այստեղ ևս կանոնաւոր կենցաղավարութիւնն ունի մեծ նշանակութիւն։ Շատ տարիների ուսումնասիրութեան առօրեայ կեանքի փորձը մեզ սովորեցնում է, որ կեանքի անբարեյաջող պայմանները և զանազան տեսակի վնասակար սովորութիւնները սիֆիլիսով վարակվածների համար վտանգաւոր են և հիւանդութեան չարիքն աւելացնում են։

Աղքատութիւնը, վատ և նուազ սնունդը, ծանր, մաշեցնող աշխատանքը, քէֆերը, յոգնածութիւնը—մէկ է լինի դա զուարճութիւններից թէ աշխատանքից—հարբեցողութիւնը, ծխելը, հոգեկան ցնցումները, այդ բոլորը, ինչպէս կեանքի փորձը ճշտութեամբ նկատել է



—ծանրացնում, բարդացնում և դժուարացնում են օրգանիզմի կռիւը սիֆիլիսի դէմ և հէնց այդ է, որ երբեմն հիւանդութիւնը դարձնում է չարորակ։

Պարզենք այս բոլորը աւելի հասկանալի կերպով։ Օրինակի համար կանգ առնենք երեք աւելի անբարեյաջող պայմանների վրայ։

1. Ծխելը—նպաստում է նրան, որ սիֆիլիսի նշանները, առանձնապէս, երեւում են բերանի խոռոչում. նա առաջացնում է այստեղ հիւանդութեան անընդհատ բորբոքումն։ Անչափ ծխելու հետեւանքը լինում է այն, որ լեզուի վերայ զարգանում են ծանր հիւանդութիւններ, նորա սալիներով ծածկուած մասերի անբժշկելի այլասերումն։ Ծխելը նպաստում է բերանի թաղանթի կարծր (կոշտկերպ) այլասերմանը, այսինքն, այսպէս ասած, գոյանում է լէյկօպլակիա. բայց հասկանալու համար, թէ ինչ է այդ, բաւական է ասել, որ լէյկօպլակիան երբեմն փոխվում է քաղցկեղի։

2. Նոյնպէս վնասակար է սիֆիլիսի ժամանակ գործածել ամեն տեսակի խմիչքեղէններ։ Բոլորեքեան կարող են միաձայն հաստատել, որ ոգելից խմիչքեղէնները մեծ վնաս են պատճառում սիֆիլիսով վարակվածներին։—

1) Նոքա վատացնում են և աւելի յամառ են դարձնում հիւանդութեան կաշուի երեւոյթները։

2) Նոքա սիֆիլիսի թոյնի հետ միասին խորտակվում են մի առանձին ույժով հիւանդների ջղային սիստեմի վրայ և դորանով սաստկացնում են հէնց իսկ հիւանդութեան վնասակար ազդեցութիւնը։ Սիֆիլիսի և ոգելից խմիչքների միասին կործանիչ ազդեցութիւնը ջղային հիւսուածքի վերայ արտայայտվում է այնպիսի մի ույժով և մշտականութեամբ, որ մենք ներկայումս

ունենք հաստատ հիմքի վրայ դրած և ուսումնասիրած հետևեալ փաստը։ Եւ ահա, սիֆիլիսն ու գինին՝ անպատճառ միասին՝ դառնում են պատճառ մի առանձին հոգեկան հիւանդութեան զարգացման, որ կոչվում է պրոգրեսսիւ պարալիչ (յառաջադիմող լուծութիւն), և նոյնպէս գլխի ուղեղի որոշ փոփոխութիւնների։

3) Ոգելից խմիչքեղէնները և նոցա գործածելը, նոյնպէս, երբեմն պայմանաւորում են սիֆիլիսի առանձին, անսովորական չարորակ ընթացքը, այսինքն, այսպէս կոչված հիւանդութեան անագան, երրորդական ձևերի վաղաժամ և բաւականին խիստ զարգացումն։ Երբ գինին ի չար են գործածում, սիֆիլիսը շատ յաճախ ընթանում է այնպէս, որ թուլացնում է հիւանդի ոյժերը և հասցնում է սննդի կատարեալ քայքայման։ Հիւանդութեան այս բոլոր տարբեր տեսակները շատ յամառ են, վտանգաւոր և դժուար բժշկելի։

3. Ոչ պակաս վնասակար է ազդում սիֆիլիսի ժամանակ և ամեն տեսակի յոգնածութիւնը. ինչից էլ որ կախված լինի այդ տեսակ յոգնածութիւնը, որքան էլ տարբեր և զանազան լինեն նորա պատճառները,—վերջ ի վերջոյ ստացվում է միևնոյնը.—պակասում են օրգանիզմի ոյժերը, կարծես նոքա հալւում են և ոչինչ չունեն, որ դիմադրեն հիւանդութեան վնասակար ոյժին։

Այդ պատճառով սիֆիլիսի ժամանակ հաւասար կերպով վնասակար են թէ մարմնական յոգնածութիւնը (չափազանց աշխատանքից, կամ ծանր աշխատանքից) և թէ մտաւոր յոգնածութիւն, երբ ուղեղը խիստ լարված է լինում.—այդ բոլորը հաւասար կերպով և միևնոյն տեսակ քայքայում է ոյժերը և թուլացնում է նոցա, հարկաւոր կռուի ժամանակ հիւանդութեան դէմ։ Նոյնպէս քայքայիչ կերպով ազդում է ի չար գործածելը սեռական



յարաբերութիւններով։ Այդ վերջին հանգամանքը վաղուց լաւ յայտնի է հասարակութեան մէջ։ Կարելի է թուլանալ նոյնպէս և չափազանց շատ զուարճութիւններից և հաճոյքներից և այստեղ հարկաւոր է աչքի առնել ցրված և անկանոն կենցաղավարութեան հետևանքները. շարունակ դրգռման, անընդհատ տօնախմբութիւնների, ճաշերի, ներկայացումների, պարահանդէսների, ընթրիքների, շամպանիով քէֆերի, անքուն գիշերների հետևանքները, որոնք անց են կացրած ակումբների ճնշուած օդում և թղթախաղութեան մէջ։ Այդ բոլորը զուր չի անցնում։ Արժէ միայն տեսնել այդպիսի մէկին, որը պատկանում է հասարակութեան ուտող-խմող դասակարգին, նայել նորա սփրթնած, հողանման դէմքի գոյնին և ժամանակից առաջ սպիտակ մազերին և ընդհանուր թառամութեանը։ Աչքի է ընկնում, որ նա արդէն ծախսել է իր բոլոր ոյժերը և սև օրի համար չէ պահել ոչ մի կտոր մարմնական թարմութիւն։

Ինչքան յաճախ տեսել եմ, որ սիֆիլիսը Պարիզի ուրախութեան այդպիսի նահատակների համար անցնում էր վատ և յամառ կերպով չէր ենթարկվում բժշկութեան, հարուածելով, մանաւանդ, նրանց նեարդային սիստեմը։

Այո. ամենայաճախը լինում է այն, որ անողոք բախտը պատրաստում է այդ աշխարհային ունայնութեան զոհերի համար տխուր ապագայ. նոքա ստանում են, այսպէս կոչված, երրորդական նեարդային սիֆիլիս։ Այդ կրկնվում է այնքան յաճախ և կանոնաւոր կերպով, որ կարելի է յայտնել հետևեալ սկզբունքը. այն է աշխարհիկ մարդը, կերուխում սիրողը, որ իր կեանքը դարձնում է մշտական տօն, որն այրում է կեանքը քէֆերի և կոնծելու մէջ, մանաւանդ տրամադրված է լինում

դէպի առաջին ջղային սիֆիլիսը։ Եւ նորա թէ հիւանդութիւնը, թէ կեանքը աննկատելի կերպով, բայց հաստատ, ուժասպառ են անում ջղային սիստեմը։ Այդպիսի մարդիկ կարող են ստանալ ուղեղի սիֆիլիս, կամ պրօգրեսսիւ պարալիչ և կամ տաբէս՝ ողնուղեղի հիւծախտ։

Կարելի էր զանազան հակառողջ սովորութիւնների վնասակար և ծանր ազդեցութիւն ունեցող նոյնանման շատ օրինակներ բերել սիֆիլիսի ընթացքի և զարգացման վրայ, բայց այդ առանց դրան էլ պարզ է և ոչ ոք չի վիճում դորա դէմ։ Թողնենք այդ և դառնանք մեզ հետաքրքրող հարցի մանրամասնութիւններին։

## ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑԸ

Բժշկելի՞ է արդեօք սիֆիլիսը անհատական տեսակէտից և կարո՞ղ է արդեօք սիֆիլիս ունեցողը պաշտպանել իրան այն վտանգից, որը սպառնում է նորան իւր մէջ գտնուող հիւանդութիւնից։

Այդ հարցը—յարմարութեան համար—կարելի է բաժանել երկու մասի։

Այսպէս նախ և առաջ տեսնենք, թէ ինչպէս են վարվում սիֆիլիսի հետ, երբ նա առաջին անգամ մտնում և գտնվում է օրգանիզմի մէջ, մի խօսքով, հիւանդութեան սկզբում, և ինչ է կատարվում, ինչ բան պէտք է աչքի առնել հիւանդութեան սկզբից քիչ թէ շատ հեռու ժամանակներում, կամ, առհասարակ, անորոշ ապագայում։

Ուրիշ խօսքով—հարց տանք մեզ, թէ ուղղակի բժշկելի՞ են սիֆիլիսի արդէն արտայայտված նշանները և կարելի՞ է նորա հետևանքների առաջն առնել։



Կամ էլի հարց տանք ուրիշ կերպ. բժշկելի՞ են միայն հիւանդութեան երևոյթները, թէ կարելի է արմատախիլ անել հէնց իսկ հիւանդութիւնը, այսպէս կոչված, հիւանդութեան դիատեզը. այսինքն, կարելի՞ է արդեօք օրգանիզմից հեռացնել հէնց իսկ վարակիչ թոյնը, որը յամառ և երկար ժամանակով մտել է նորա մէջ և մինչ ընդունակ է այստեղ կենդանանալ և արտայայտվել հիւանդութեան մի որևիցէ նոր ձևով։ Իհարկէ, դժուար չէ հասկանալ, թէ ինչու մէջն այստեղ տարբերութիւնը, և պարզ է, որ այդ միևնոյնը չէ։ Տեսնենք, ինչ կարելի է ասել այս հարցերի ամեն մէկի առիթով առանձնապէս։

## ԲԺՇԿԵԼԻ՞ ԵՆ ՍԻՖԻԼԻՍԻ ԱՅՆ ՆՇԱՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՐԴԷՆ ԶԱՐԳԱՑԵԼ ԵՆ

Մեծ մասամբ կարելի է պատասխանել միանգամայն որոշ և հաստատված կերպով—«Այո»։ Ահա ինչ բան է սովորեցնում այս դէպքում փորձը։

1. Ինչպէս կանոն.—սիֆիլիսի ամեն մի արտայայտութիւնը անցնում է, բժշկութեան ազդեցութեան տակ անյայտանում է, եթէ բժշկութիւնը նշանակված է հմուտ կերպով ու կատարւած է բաւական երկար ժամանակ և ուժեղ ձևով։ Այդ բանում մենք կարող ենք համոզվել ամեն մի քայլափոխում։

2. Իբրև բացառութիւն, պատահում են սիֆիլիսի նշաններ, որոնք չեն ենթարկվում հմուտ և երկար ժամանակ գործադրված առանձնայատուկ բժշկութեան ազդեցութեանը։ Այսպիսի դէպքերը շատ սակաւ են լինում և բոլորովին նման չեն հիւանդութեան սովորական ընթացքին։

Անօգուտ է բացատրել առաջին սկզբունքը. նա պարզ է և ակներև է ինքն ըստ ինքեան։ Բայց եթէ որևէ մէկն երիտասարդներից, որոնց համար գլխաւորապէս այս գիրքը գրված է, երկմտութեան մէջ ընկնէր և ցանկանար անձամբ համոզվել այդ բանում, արժէ միայն նորան այդ նպատակով մտնել մի քանի անգամ մի որևիցէ հիւանդանոց, որտեղ կան սիֆիլիսով վարակված հիւանդներ։ Միանգամից աչքին կընկնէր հետևեալը. շատ հիւանդներ, որոնք մտնում են հիւանդանոց հիւանդութեան այս և այն նշանների առթիւ, դուրս են գրվում այնտեղից մի շաբաթից յետոյ, կամ երկու, երբեմն մի ամսից, ամիս ու կէսից, կամ երկու ամսից ոչ աւելի,—ու միանգամայն առանց հիւանդութեան արտայայտութիւնների։ Բանը նրանումն է, որ սիֆիլիսի երևոյթները յատկութիւն ունեն արագ կերպով ենթարկվել բժշկութեան, այսինքն առանձնայատուկ դեղերի ներգործութեան։

«Սնդիկը ճարպիկ է». ասում են մեզ հիւանդները, —«արագ ամեն ինչ կըմաքրէ»։

Եւ ճշմարիտ է, հաճելի է, սիրելի է նայել, ինչպէս նա յաղթում է հիւանդութիւնը, երբ դեղը հասնում է նպատակին և յաջող է նշանակված։ Նոյնը անում է և եօդական կալին, իսկ ևս առաւել երկու դեղերը միասին.—այն դէպքերում, երբ նշանակում են, այսպէս կոչված, խառն բժշկութիւն։

Այնպէս որ, սովորաբար (ի հարկէ խօսքը բացառութիւնների մասին չէ) առանձնայատուկ դեղերի միջոցով մենք կարող ենք մի քանի օրուայ ընթացքում, մի շաբաթում բժշկել սիֆիլիսի այնպիսի ցաւ պատճառող երևոյթները, ինչպիսի են երկրորդական և երրորդական շրջանի գլխացաւերը, յօդերի և մկանունքների ցաւերը, ոսկրամաշկի ցաւերը և նեվրալգիաները։



Երեք, չորս, շատ-շատ վեց շաբաթուայ բժշկութեան ընթացքում անյայտանում են երկրորդ շրջանի վաղ սիֆիլիսի արտայայտութիւնները. որոնք երևացել են մորթու և թաղանթների վերայ։ Այդքան էլ ժամանակ, երբեմն մի փոքր աւել, հարկաւոր է, որ ծծվեն և ծածկվեն սպիով երրորդ շրջանի անագան սիֆիլիսի արտայայտութիւնները։ Չորս կամ վեց շաբաթում ծծվում են ոսկորների սիֆիլիտիկական հաստութիւնները։ Միևնոյն ժամանակը բաւական է, որ անյայտանան միջակ մեծութեան խիժային ուռոյցքները (ГУММЫ). մի կամ երկու ամսուայ եռանդուն բժշկութեան պայմաններում անյայտանում են սիֆիլիտիկական ձուերի ջրգողութիւնը և այլն։

1008 / 367824

Աւելին կասենք։ Այստեղ զարմանալի է ոչ միայն այն արագութիւնը, որով սնդիկը և եօդը ներգործում են սիֆիլիսի երևոյթների վրայ, բայց և միևնոյն ժամանակ նոցա գործողութեան անսովոր ոյժը։ Այսպէս վերոյիշեալ երևոյթների մէջ, որոնք ենթարկվում են բժշկութեան, կան նշաններ ոչ միայն երկրորդ շրջանի վաղ սիֆիլիսի, այսինքն մակերևոյթական նշաններ, այսպէս ասած, վերադիր լաւորակ՝ իրանց ընթացքում և իրանց բնութիւնով։ Ոչ, մենք տեսնում ենք, որ միևնոյն բժշկութեան ազդեցութեան տակ ծծվում են և խոր մտած սիֆիլիսի հարուածները, որոնք շօշափում են ներքին օրգանների իսկական հիւսուածքը. անյայտանում խոցերը, որոնք դադարեցնում են իրենց կործանող ընթացքը և թարախալից քայքայումը. անհետանում են, մինչև անգամ բոլորովին, ամբողջ ուռոյցքներ, որոնք երբեմն լինում են ոչ այնքան էլ փոքր։

Այսպէս օրինակ—և այս պատահում է տեսնել մշտական—բժշկութեան ազդեցութեան տակ արագութեամբ անյայտանում են խիժ ուռոյցները (гуммы), որոնք հասնում են չորի, ծիրանի և քաստանի մեծութեան, կամ—որ աւելի սակաւ է լինում—մինչև անգամ կիտրոնի և մանդարինի մեծութեան։ Այդ բոլորը անում է հակասիֆիլիտիկական բժշկութիւնը։ Այստեղ հաւասար կերպով ազդեցուցիչ է, ինչպէս մենք արդէն ասացինք դեղերի գործողութեան թէ ոյժը և թէ արագութիւնը։

Դեղի արագ ներգործութիւնը այն վճռական նշանակութիւնն ունի, որ հենց դորանով հաստատւում է լաւացող հիւանդութեան սիֆիլիտիկական բնութիւնը, այսինքն նայելով բժշկութեան էֆֆէկտին, որոշում են հիւանդութեան ինչ լինելը, հաստատւում է թէ դա ճշտիւ ուրիշ ոչինչ է, եթէ ոչ միայն սիֆիլիս։

Երբեմն առանձնայատուկ դեղերի այդ գործողութիւնը, ոյժը և արագութիւնը, որով նրանք իրանց ցոյց են տալիս, միանգամայն ազդեցուցիչ են, զարմանալի և բոլորովին անսովոր են լինում։ Նոցա կարելի է առանց չափազանցութեան անուանել հրաշագործ և կախարդական։ Եթէ ես դիմած լինէի ընթերցող-բժիշկներին, որոնք գիտեն այս բոլորը փորձով, ինձ հարկաւոր չէր լինի դիմել օրինակների օգնութեան իմ ասածներիս հաստատութեան համար։ Բայց որովհետև այս գիրքը պէտք է կարդան այնպիսի մարդիկ, որոնք չունեն բժշկական փորձառութիւն, այսինքն, նոքա, որոնք կոչւում են անգէտներ այդ բանում, ինձ հարկաւոր է պարզել խօսքերս հասկանալի օրինակներով։ Ահա—վերցնենք մի քանի օրինակ այն ոյժի, որով գործը գլուխ են տանում յատուկ դեղերը սիֆիլիսի դէմ։



Մի երիտասարդ կին մտնում է սուրբ Լուդովիկ կոչված հիւանդանոցը, մարմնի վրայի ցանի սռիթով, որը խիստ շատ տարածուած է, միացած միմեանց հետ և երկու տարուայ ընթացքում ոչ մի բժշկութեան չի ենթարկվում։ Նորան մինչև այժմս ասում էին, թէ դա իսկական մորթու ախտ է, այսպէս ասած թեփաւոր քոս։ Այն ինչ, իսկապէս, միանգամից կարելի էր ճանաչել, որ դա սիֆիլիսի տեսակներից մէկն էր, որը տրամադրուած է գոյացնել թեփեր։ Նշանակուած է համապատասխան հակասիֆիլիտիկական բժշկութիւն։ Եւ ահա հինգ շաբաթից յետոյ ցանը, կարծես, բոլորովին չէ եղել։ Խնդրեմ դէմադէմ դրէք այս տողերը. երկու տարի և հինգ շաբաթ։ Նոյն բանը զարմանալի է հետևեալ օրինակում։

Մի երիտասարդ կին 8-9 ամսուայ ընթացքում տանջվում էր երեսի նևրդացաւութիւնով և ոչինչ չէր կարող նորան օգնել. մտնելով սուրբ Լիւդովիկի հիւանդանոցը, նա մեզ խոստովանեց—մինչև այժմս նա գաղտնի պահում էր այդ—, որ ունեցել է սիֆիլիս։ Սկսեցին անդիկ տալ և 12 օրից յետոյ ցաւերը բոլորովին անյայտացան։

Հասակն առած մի պարոն 6-7 տարուայ ընթացքում ոտքի վրայ ունէր մի խոց. իսկական չափերը, երբ մտաւ հիւանդանոց, հետևեալն էին՝ 17с/м. երկարութիւն և 12-13с/м. լայնութիւն։ Այդ խոցի ծագումը միշտ բացատրում էին ոտքի վէնական երակների լայնանալով և դորանից էլ բժշկում էին. կասկածելով այստեղ սիֆիլիս, մենք նշանակեցինք նորան խառն առանձնայատուկ բժշութիւն։ Ուղիղ 7 շաբաթից յետոյ խոցը բոլորովին անյայտացաւ, կարծես չէր էլ եղել։ Եւ այստեղ նոյնպէս համեմատեցէք երկու ժամանակամի-

ջոցները,—7 տարի և 7 շաբաթ։ Բժշկութիւնը նոյն հետևանքն ունեցաւ և մի ուրիշ կնոջ մօտ, որի վերևի շրթունքի վրայ գոյացել էին հանգոյցներ, ծածկուած քոսերով։ Այդ հիւանդութիւնը ընդունւած էր գայլուկի տեղ և նշանակւած էր հակագեղձախտական բժշկութիւն։ Այդ բժշկութիւնը ոչ մի ներգործութիւն չունեցաւ և հիւանդութիւնը մնում էր առանց փոփոխութեան քան և վեց տարի շարունակ. և այդ բոլորն անցաւ անհետ մի 3-4 շաբաթւայ ընթացքում, երբ գործադրւեց խառն հակասիֆիլիտիկական բժշկութիւն։

Միևնոյնը կարելի է պատմել և մի կնոջ մասին, որը չորս տարուայ ընթացքում ունէր ազդրի վրայ սիֆիլիտիկական ցան, որը տարածւում էր մորթու նոր և նոր տեղերում, կարծես սողում էր նորա վրայով։ Այդ կինը բժշկվել էր բայց շատ քիչ և ընդունել էր դեղերը կարելի է ասել հոմէոպատիական չափով։ Երբ ես առաջին անգամ տեսայ հիւանդին, մորթու ախտը ունէր ձեռքի ափի մեծութիւն. երբ որ նշանակուեց կանոնաւոր հակասիֆիլիտիկական բժշկութիւն, ցանը սկսեց անյայտանալ և վեց շաբաթից յետոյ մնացին միայն սպիներ։

Այս բոլոր ասածը աւելի պարզ կըլինի, եթէ մենք դէմադէմ դնենք երկու հետևեալ դէպքերը։

Երկու կին եկան մեր հիւանդանոցը մի և նոյն օրը և միատեսակ հիւանդութեան պատճառով, այսինքն—կամարաձև քիմքի վերայ ունէին խիժ ուռոյցքներ (ГУММЫ) որոնք արդէն կակղցել էին և սպառնում մօտ ապագայում ծակվել։ Մէկը նրանցից մտաւ հիւանդանոց. իսկոյն ևեթ նշանակվեց եօդական կալի և երկու շաբաթից յետոյ հիւանդութիւնը անցաւ, կարծես չէր էլ եղել։ Միւսը ծանրաբեռնւած լինելով բազմաթիւ ընտա-



նիքով չէր կարող մտնել հիւանդանոց և վճռել էր բժշկվել ոտքի վրայ գնալ-գալով. նորան նոյն բժշկութիւնը նշանակվեց։ Մի շաբաթից յետոյ նա վերադարձաւ մեզ մօտ սարսափելի դրութեան մէջ։ Ուռուցքը բերանում ծակվեց, բացվեց և գոյացաւ մի խոց, որը քիմքի կէսը ոչնչացրել էր։ Ինչից պատահեց այդ բանը։ Շատ պարզ է, այդ միջոցին նա բոլորովին չէր բժշկւել։ Ինչու համար։ Ահա բանը ինչումն է։ Հիւանդանոցում նորան դեղ չըտուեցին (եօդական կալի) այն պատճառաբանութիւնով, որ նա ապրում էր Պարիզում կէս տարուց պակաս, իսկ առնել դեղ նա միջոց չունէր. Եւ ահա նա մնաց առանց որևէ բժշկութեան*)։

Լսեցէք կրկին մի պատմութիւն, որը յայտնի է նաև նորանով, որ բանը վերաբերում է այնպիսի մի հիւանդութեան, որը երբէք ոչ մի կապ և կախումն չունի սիֆիլիսի հետ. Մի մարդ երեսուն չորս տարեկան հասակում տանջվում էր մի տարի ու կէս շարունակ մի տեսակ երկարատև փորահարինքով, այսինքն աղիքների խիթով, յաճախ կարիք զգալով և արիւնախառն արտաթորութիւններով, որոնք երբեմն փոխվում էին իսկական աղիքների արիւնահոսութեան, և այլն։ Հիւանդութիւնը ոչ մի բժշկութեան չէր ենթարկվում և հասցրեց հիւանդին խիստ թուլութեան ու լղարութեան, կարելի է ասել, մինչև կատարեալ քայքայման։

Այն հիման վերայ, որ հիւանդը անցեալում ունեցել էր, անկասկած, սիֆիլիս, բժիշկ Լեռեբուլէնի մտքում

*) Ծանօթ. Ինձ յաջողեց համոզել, յենվելով այդպիսի սարսափելի դէպքերի վրայ, քաղաքային խորհուրդը հիւանդանոցների գործերի վերաբերմամբ (asistance publique) փոփոխել իրանց կանոնադրութեան այդ պարագրաֆը, որի հիման վերայ ձրի դեղ չեն տալիս նոցա, որոնք ապրում են Պարիզում վեց ամսից պակաս։

ծաղկեց ենթադրութիւն, թէ արդեօք այս բոլոր նշանները չէին առաջ գալիս սիֆիլիսի թոյնից, և նա նշանակեց այս դէպքում առանձնայատուկ բժշկութիւն։ Հետևանքը եղաւ այն, որ արագ կերպով լաւացաւ հիւանդը և տասն օրից յետոյ գրեթէ կանոնաւոր արտաթորութիւն էր ունենում։ Երկու ամսից յետոյ հիւանդը բոլորովին լաւացաւ և այլևս չէր հիւանդանում։

Ես ասել եմ արդէն, որ երբեմն սիֆիլիսի ժամանակ դեղերի ազդեցութեան արագութիւնը լինում է իսկապէս զարմանալի։ Ահա ձեզ երեք այդպիսի օրինակներ.

I. Սրունքի ոսկորների ուռուցքը սաստիկ ցաւ էր պատճառում։ Հիւանդը գիշերները ցաւից կարելի է ասել գալարվում էր յատակի վերայ և, ինարկէ, այդ պատճառով քուն չունէր, և արդէն երկու շաբաթ է, ինչպէս ինքը խոստովանում էր, տանջւում էր իրան։ Նշանակած է նորա ընդունել եօդական կալի 3-6 գրամ օրուայ մէջ. ցաւերը մեղմացան հէնց առաջին գիշերը և միանգամայն անյայտացան 3-4 օրից յետոյ։

II. Մի 52 տարեկան պառաւ կին, որը մի կարճահասակ, նիհար և խեղճի մէկն էր, ունէր սիֆիլիս, որը արագ և չարաչար կերպով էր ընթանում։ Հիւանդութիւնը յայտնվեց նորա մօտ ուռած ցանով, որ ծածկել էր ամբողջ մարմինը։ Այդ ցանը իւր ձևով շատ բազմատեսակ էր. կային կարմիր բծեր չնչին քանակութեամբ, իսկ մնացածը բաղկացած էր, համարեա թէ ամեն տեղ, շատ խոշոր կաշուի հանգոյցներից (պապուլներից) և մինչև անգամ թունդ կարմրագոյն ու մեծ հանգոյցներից։ Մի քանիսը նոցանից սկսել էին արդէն թարախվել և ծածկվել էին քոսերով։ Ցանի ընդհանուր տեսքը մխիթարական չէր։ Սկսուած է սնդիկի բժշկութիւն, այսինքն սրսկվում էր կաշուի տակ սնդիկի սօզօիօդօլի աղ



կախարդափոխութիւն։ Արդէն երկրորդ օրը անյայտացան սիֆիլիտիկական ցանի բծերը և սկսեցին նստել և հաւասարվել փոքր ու մեծ հանգոյցները։ Ահա մի շաբաթ ևս և ամբողջ ցանն անյայտացաւ, կարծես չէր էլ եղել։

III. Կոկորդի գումմական ախտը, որը է արագ և չարաչար ձևով ընթացող սիֆիլիսի արտայայտութիւն, մի դէպքում առաջ բերեց շատ ծանր շնչարգելութիւն, որը երբեմն փոխվում էր խեղդուելու նշաններով։ Հիւանդի դրութիւնը շուտով դառաւ այնքան լուրջ, որ պէտք էր պատրաստ լինել կատարելու տրախէօտոմին (կոկորդի օպերացիա) և սպասել րոպէ առ րոպէ նորա անհրաժեշտութիւնը։

Այն ինչ այդ միջոցին սրսկեցին կալօմել և դժուար է հաւատալ, թէ ինչ փոփոխութիւն եղաւ հիւանդի դրութեան մէջ. արդէն մի քանի օրից յետոյ անցան այդ անհանգստացուցիչ նշանները, ամեն մի վտանգ հեռացաւ, շնչառութիւնը կատարվում էր բոլորովին հանգիստ և մինչև անգամ հիւանդի ձայնը բոլորովին պարզուեց։ Ոչինչ չը չափազանցնելով, այդ բժշկութիւնը կարելի է անուանել հրաշագործութիւն։

Ուրիշ դէպքերում զարմանալի է լինում դեղերի ներգործութեան ոյժը և այն հետևանքների կարևորութիւնը, որ ստացվում են բժշկութիւնից. և այդ հանգամանքը, որը ինարկէ շատ էական է, կարելի է ապացուցանել հաւանական կերպով, զարմանալի օրինակների մի ամբողջ շարքով։

I. Մի պարոն 37 տարեկան հասակում, մտաւ ս. Նիկոլայի հիւանդանոցը փաղեդենական (քայքայուած) սիֆիլիսի և ձեռքերի այլանդակող հիւանդութեան առիթով (այսպէս կոչուած մուտիլացիա)։ Այդ քայ-

քայքայած սիֆիլիտիկական ախտը ման եկաւ ձեռքերի բոլոր մատների վրայ և 9 տարուայ ընթացքում ոչ մի վայրկեան չէր հանգստանում։ Այստեղ ամեն ինչ միանգամայն կարծես կրծված էր. գորգայան անկանոն կոպիտ սպիներ, ձեռքերը, կծկված ջիլերով, զրկվել էին շարժումներից... Այսպէս ձախ ցուցամատից, օրինակ մնացել էր մի փոքրիկ կտոր միս, առաջին փալանգի մեծութեամբ։ Ոչ ոք չէր կարողանում բացատրել հիւանդութեան իսկական պատճառը և բժիշկների կարծիքն այդ առթիւ միշտ փոխվում էր։

Այստեղ ընդունում էին փոփոխաբար դալուն, սիֆիլիս, պալարախտ և սիրինգոմելիա հիւանդութիւնը։ Այստեղ ոչ մի բան չէր օգնում, թէպէտ ամեն ինչ փորձված էր։ Երբ մենք առաջին անգամ տեսանք հիւանդին, խոցերը, այն էլ ամենավատ տեսակի, ծածկում էին գրեթէ բոլոր մատերը (բացի ճկուտից) և ձախ ձեռքի թաթի յետևի կողմը. իսկոյն և եթ նշանակվեց ուժեղ բժշկութիւն՝ կալօմելի սրսկումն և եօդական կալի։ Վեց շաբաթից յետոյ կատարեալ բժշկութիւն: Իբրև հաստատումն մեր ասածների պահում եմ երկու լուսանկար, իմ ընթերցողների համար։

II. Մի պարոն, 34 տարեկան հասակում, ունէր մարմնի ստորին մասում մի ուռուցք, որը բանելով փոքր կոնքի ամբողջ խորշը, շօշափելիս շատ պինդ էր։ Ըստ երևոյթին դա մի չարորակի ուռուցք էր և իմ երեք ընկեր պրոֆեսորները որոշեցին սարկոմ հիւանդութիւնը։ Ես հաստատեցի նոցա հիւանդութեան որոշումը և, կասեմ հէնց այժմ, նաև նոցա սխալը։ Բարեբախտաբար, հարց ու փորձ անելով հիւանդի անցեալի մասին ես գտայ ժառանգական սիֆիլիսի հաւանական հետքերը և դա ինձ դրդեց փորձել առանձնայատուկ բժշկութեան ներ-



գործութիւնը. և իսկոյն ուռուցքը սկսեց փոքրանալ, ծծվել, մի խօսքով հալվել։ Արդէն երկու ամիս է անցել, ու այդ ենթադրեալ չարորակ ուռուցքից ոչ մի հետք չէ մնացել։ Այդ ժամանակից հիւանդի առողջութիւնը միշտ լաւ է եղել։

III. Մի երիտասարդ կին, որի սիրտը յաճախ և առատ կերպով եռ էր գալիս, իսկ ստամոքսը ցաւում, վերին աստիճանի նիհարել և հասել էր խիստ արեան պակասութեան։ Այս բոլորը պարզ էր, որ ստամոքսի կլոր վէրքի նշաններ էին։ Ես հրաւիրված էի այդ հիւանդի մօտ և քննելով համոզվեցի, որ ինչ կարելի էր անել և ինչ արվում է այդպիսի դէպքերում, այդ բոլորն արդէն նշանակված և կատարված է եղել առանց մի փոքր յաջողութեան։ Ես յիշեցի, որ այդ տիկնոջն 8 տարի առաջ բժշկում էի անազան սիֆիլիսի երևոյթներից և վճռեցի փորձի համար առաջարկել նորան եօդական բժշկութիւն։ Ճիշտ է, ես այդ կատարեցի երկար տարուբերվելուց յետոյ, որովհետև առաջները ինձ չէր պատահել երբէք ստամոքսի կլոր վէրքի դէմ նշանակել առանձնայատուկ բժշկութիւն։ Եւ, յանկարծ, կարծես, կախարդական փայտի շարժումից, բոլորն անցաւ։ Իսկոյն ևեթ դադարեցին սրտի եռ գալն ու ստամոքսի բոլոր անկանոնութիւնները։ Մի խօսքով, այն հիւանդը, որն իմ առաջին այցելութեան ժամանակ ներկայանում էր մի մեռնող էակ, սկսեց առողջանալ և այն տեսակ, որ բոլորովին լաւացաւ։ Հետաքրքիր է աւելացնել, որ 8 տարուց յետոյ նորից նորա մօտ կրկնվեց նոյն հիւանդութիւնը, մինչև անգամ աւելի լուրջ քան թէ առաջ, և քիչ էր մնում, որ նրան հասցնէր գերեզման։ Բայց նա էլի լաւացաւ, բոլորովին առողջացաւ նոյն կարճ ժամանակամիջոցում, երբ գործադրված էր

նոյն առանձնայատուկ բժշկութիւն։ Այդ բոլորը, ինարկէ, ապշեցուցիչ է։ Իբրև եզրափակութիւն՝ ահա մի օրինակ եւ՝ իսկական յարութիւն ի մեռելոց։

IV. Լուսեան հիւանդանոցը մի օր եկաւ, կամ աւելի ճիշտն ասած, քաշ գալով հազիւ հասաւ, մի երիտասարդ կին մինչև վերջին աստիճանը մաշված։ Թվում էր, թէ նա գտնվում է թոքախտի վերջին աստիճանում։ Նախ և առաջ նա ունէր աջ ոտի տակ վատ տեսակի մի խոց, որն իւր բնութիւնով, անկասկած, սիֆիլիտական էր, և բացի դորանից փագեդենական էր (քայքայող)։ Այդ քայքայումն և ընդարմանալը սկսել էին արդէն մի տարուց իվեր և վէրքն այնքան կրծոտել էր ոտքի տակը, որ նորանից մնացել էր մեծ մատի միայն կէսը. չորրորդ մատի մի մասը, և բոլորովին չըկային երկրորդ և երրորդ մատերը։ Այդ բոլոր մնացուածքը անխնամ թողած վէրքի տեսք ունէր, բազմաթիւ ուռուցքներով մութ կարմրագոյն եզերքով և տեղ տեղ կանաչ-սևագոյն փայլով, որը մատնանիշ էր անում, անկասկած, մասնաւոր ընդարմացումի վրայ. իսկ չուրջը կաշին ուռած էր և, կարծես, կարմիր քամու պէս (рожа) բորբոքված լինէր։ Երկրորդը՝ ինչ որ կար այս կնոջ մէջ, աւելի նման էր թոքախտի —և ընդհանուր տեսքով և ուրիշ նշաններով. նա մաշված էր, ինչպէս հալած մոմ, միանգամայն սպառված ույժերով, հազում էր արտահանելով թարախալից խորխ, գիշերները քրտնում էր, ջերմում էր ոչինչ չէր ուտում և այլն. մի խօսքով կատարեալ քայքայումն։

Նշանակվեց նորա համար միանուագ, կազդուրիչ և առանձնայատուկ բժշկութիւն։

Եւ ահա սկսվեց մի հրաշք, որը մեզ զարմանքի մէջ գցեց. հիւանդը սկսեց կազդուրվել ոչ թէ օրերով



այլ ժամերով։ Վէրքի քայքայումն և ընդարմացումը ոչ թէ առաջ էին ընթանում, այլ ընդհակառակը, սկզբում խիստ կերպով սահմանափակվեցին, իսկ յետոյ սկսեցին պակասել և մնացած հիւսուածքները սկսեցին աստիճանաբար կորցնել իւրեանց սպառնացող տեսքը և փոխվել աւելի առողջի։ Քառասուն օրից յետոյ, ինչպէս հիւանդը մտել էր հիւանդանոց, եղած վէրքի փոխարէն կային միայն առողջացած սպիներ։

Այդ բաւական չէ։ Բժշկութիւնը կատարել է աւելի ապշեցուցիչ և հրաշագործ բան. հիւանդի ընդհանուր դրութիւնը լաւացաւ և թոքերի կողմից երևող նշաններն անյայտացան։ Կարճ ասելով.—երբ վէրքի թարախալից քայքայումն անցաւ, միանուագ անցաւ և թոքախտը, այսինքն անհետացան և թոքերի կողմից սպառնացող նշանները և ընդհանուր քայքայումը։

Այն հիւանդը, որ—խնդրում եմ լաւ հասկանալ իմ խօսքերը—հիւանդանոց մտնելու վարկեանին նման էր ման եկող ստուերի, վախեցնում էր բոլորին իւր երեսի մեռած գեղնութիւնով, որի վրայ միայն կաշի և ոսկոր էր մնացել, որը չէր կարողանում մի բան ուտել և արդէն մի տարի ու կէս չէր տեսնում իւր ամսականը, հէնց այն հիւանդը, որի օրերը կարծես հաշված էին,— յանկարծ սկսեց լաւանալ։

Նա զգաց քաղցածութիւն, սկսեց ուտել և մարսել կերածը. փոքր ինչ անց, նորա տեսքն արդէն բոլորովին ուրիշ էր, երեսի վերայ խաղաց առողջ կարմրութիւն. ույժերը սկսեցին հաւաքվել. երևաց ամսականը և նա սկսեց մինչև անգամ լցվել։ Երեք ամսից յետոյ նա վերջնականապէս վերածնվեց, և ոչ ոք չէր կարող ճանաչել նորան, ինչպէս առաջուայ հիւանդի։ Վերջ ի վերջոյ երբ, նա, չորս ամիս մնալուց յետոյ, թողեց հի-

ւանդանոցը, ներկայացնում էր մի կին լի ոյժերով և առողջութիւնով: Բանը հասաւ այն աստիճանի, որ—կրկնելով հէնց նրա սեփական խօսքերը—«երբ վերադարձաւ առողջանալուց յետոյ արհեստանոց, նորան այնտեղ ընկերները չըճանաչեցին»: Ահա օրինակներ այն բանի, ինչ որ կարող է անել բժշկութիւնը: Եւ անում է այդ, կրկնում եմ, ամեն մի քայլափոխում:

## ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Սակայն, եթէ սիֆիլիսը միշտ այդպէս հնազանդ կերպով ենթարկվէր առանձնայատուկ բժշկութեան և հեշտութեամբ բժշկվէր, այն ժամանակ նա չէր լինի սիֆիլիս, այսինքն մի հիւանդութիւն, որ ունի այդպիսի վատ համբաւ: Եւ, իսկապէս, երբեմն նկատվում է բոլորովին ուրիշ պատկեր. սիֆիլիսի նշանները կամ բժշկվում են մեծ դժուարութեամբ, անհետանում են զանազան կերպով և ոչ-բոլորովին, կամ միանգամայն չեն ենթարկվում բժշկութեան, կամ վերջապէս, հիւանդութիւնը տանում է դէպի մի որեւիցէ խորտակում: Չի կարելի ծածկել, որ երբեմն սիֆիլիսը հաշմանդամ է դարձնում մարդկանց, իսկ երբեմն և սպանում է նոցա: Բայց այստեղ հարկաւոր է արդարադատ լինել: Քըննելով բոլոր այդ տեսակ անբուժ և անյաջող դէպքերը, պէտք է զանազանել վնասը, որ ստացւում է հէնց իսկ հիւանդութիւնից անմիջապէս, և չարիքը, որ առաջ է գալիս զանազան հանգամանքների բերմունքից: Ուրիշ կերպ և աւելի ճշտօրէն կարելի է ասել այսպէս,



որ այդ դժբաղդութիւնների մէջ երբեմն մեղաւոր են լինում երեք պատճառներ՝ հիւանդութիւնը, հիւանդը և բժիշկը: Բացատրենք երկու վերջինների վնասակար ազդեցութիւնը:

I. Սիֆիլիսը և նորա երեւոյթները չեն անյայտանում շատ յաճախ նոյն իսկ հիւանդների մեղքով և հէնց նորա համար, որ նոքա դժուարացնում են բժշկութեան գործը առողջութեան համար վնասակար զանազան սովորութիւնների շնորհիւ. ի չար են գործ ածում գինին, ծխելը, չափազանց յոգնում են և անձնատուր են լինում շռայլութեան և այլն: Երբեմն անհոգութիւնից հիւանդները բոլորովին չեն բժշկվում, կամ շատ քիչ, անփոյթ կերպով, ոչ սիստեմաբար, ու անժամանակ: Ամենայաճախը պատահում է, որ բժշկութիւնը սկսվում է շատ ուշ:

Կանգ առնենք այս վերջին հանգամանքի վրայ (որովհետև բոլորը չի կարելի մի մի թվել). բանից դուրս է գալիս, որ հիւանդները երբեմն դիմում են բժշկին սիֆիլիսի այս և այն երեւոյթների առիթով միայն այն ժամանակ, երբ արդէն ուշ է բժշկել նոցա, և բժիշկը՝ յուսահատ՝ միայն ձեռքերը պէտք է թափ տայ:

Փորձի համար երեք օրինակ բերեմ իմ գրատետրից: Մի երիտասարդ կին գալիս է մեզ մօտ քիմքի մեծ ծակով, որը հետեւանք է սիֆիլիսական ուռուցքի, գումմի: Այդ ծակը, ինչպէս ասում է հիւանդը, այնքան էլ վաղուց չէ և գոյացել է այս օրերում: Բայց արդէն անուղղելի է. ինչքան էլ զօրեղ են սնդիկը և եօդը, բայց չեն կարող ստեղծել նորա համար մի նոր քիմք: Այն ինչ, եթէ այդ կինը գար երկու շաբաթ, կամ մի շաբաթ առաջ, կարելի կըլինէր պահպանել նորա քիմքն անվնաս: Չէ որ պինդ և կակուղ քիմքի գումմերը կախարդ-

ական ձեւով ենթարկվում են բժշկութեան, եթէ, նա, ի հարկէ, սկսված է իր ժամանակին։

Միւս հիւանդը դիմեց մեզ առաջին անգամ խրոնիկական արնախառն թարախի և վատահոտ հարբուխի առիթով։ Մինչև այժմ նա ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում իր հիւանդութեան վրայ։ Քննելով նորա քթի խորշը չիշով, մենք համոզվեցանք, որ նորա ոսկորները արդէն ընդարմացել են։ Ի՞նչ կարելի է արդեօք այստեղ անել։ Ոսկորի ընդարմանալը, ի հարկէ, նորա մահն է, իսկ մենք չենք կարող բժշկել մահից։ Եւ այդ պատճառով այստեղ կըպատահի և անխուսափելի կերպով հետեւեալը. մեռած ոսկորները կըբաժանվեն կենդանի հիւսուածքից և վայր կընկնեն, իսկ քիթը կիջնի իր հիմքում. և հետեւանքը կըլինի այն, որ հիւանդը, և նոյն իսկ—նկատեցէք—գեղեցիկ հիւանդը կըդառնայ այլանդակ, կըմնայ, այսպէս ասած, «ոչխարի քթով»։

Երրորդ հիւանդի մօտ մի քանի ամիս առաջ զարգացաւ կէս մարմնի պարալիչ։ Արդէն հիւանդի ձեռքն ու ոտքերը սկսել էին կրծվել, երբ նա դիմեց մեզ օգնութեան համար։ Այն ինչ կաթուածից առաջ նորա մօտ լինում էին երկարատև և սաստիկ գլխացաւեր։ Եւ նա թէպէտ գիտէր, որ ունեցել է սիֆիլիս, բայց չըմտածեց հէնց այն ժամանակ դիմել բժշկի խորհրդին եւ սկսեց բժշկվել միայն կաթուածից յետոյ։ Այժմ նա փափագում է բժշկվել, այն ինչ չարիքն արդէն կատարուել է։ Ուշ է, շատ ուշ է։ Կէս տարի առաջ ուղեղի սիֆիլիսական ցաւը, որ պարալիչից առաջ կար. կարելի էր բժշկել. իսկ այժմ գոյացաւ անջնջելի հաշմանդամութիւն, որը և մեր հիւանդին դարձրել է յաւիտենական խեղ։



Կարելի է բերել անթիւ քանակութեամբ նոյնանման օրինակներ։ Դուք տեսնում էք, ուրեմն, որ շատ անգամ սիֆիլիսի չըբժշկվելու և նորա այս և այն արտայայտութիւնների մէջ մեղաւոր են իրանք հիւանդները։ Չի կարելի մեղադրել այդ բանում հէնց հիւանդութիւնը։

* * *

II. Սակայն պատահում է (հարկաւոր է այդ բանում խոստովանել և զղջալ), որ մեղքն ամբողջապէս ընկնում է բժշկի վրայ։ Այո, երբեմն կարելի է ասել հաստատ կերպով, որ, եթէ սիֆիլիսը չէ բժշկված, մեղաւորը այդ բանում բժիշկն է։ Բայց պատահում է այդ ինչու։ Երբեմն բժիշկը չի ճանաչում սիֆիլիսը եւ մինչեւ անգամ կարողութիւն էլ չունի լաւ ճանաչելու, որովհետեւ սիֆիլիսի ուսումնասիրութեան գործնական գիտութիւնը անբաւարար կերպով է դրված մեր համալսարաններում։ Բացի դորանից, ով կարող է համոզված ասել, որ գիտէ կատարելապէս սիֆիլիսը և նորա ամբողջ ընթացքը։

Ահա այդ հիւանդութեան ճանաչելու բազմաթիւ սխալների պատճառը։ Մի ուրիշ անգամ էլ հիւանդութեան իսկական բնութիւնը իմացվում է միայն այն ժամանակ, երբ բժշկութիւնը արդէն չի կարող տալ իսկական օգուտ։ Երբեմն սիֆիլիսի բժշկութեան գործին խանգարում են կեղծ և նախապաշարված հայեացքները։ (Այսպէս, մանաւանդ, վնասակար են այսպէս կոչուած օպպորտունիստների հայեացքները, որոնց թւում բաւական բժիշկներ կան յայտնի գիտական անունով, բայց որոնք, այնուամենայնիւ, համարում են, որ

սիֆիլիսը պէտք բժշկել միայն արտաքին արտայայտութիւնների վարյկանում. Նոքա համոզված են, որ հիւանդութեան պաշտպանողական բժշկութիւնը հանգիստ ժամանակ աննպատակ եւ անօգուտ է):

Վերջապէս, վնասում է նաև հաւատի բացակայութիւնը, որը ոչ մի բանով չի կարելի արդարացնել, անվստահութիւնը դէպի բժշկութեան զանազան նոր ձևերը և, մասնաւորապէս, օրգանիզմի մէջ ենթամաշկեայ սրսկումներով անգիկ մտցնելը:

Այսպէս մի քանիսը բացասում են առհասարակ սրսկումների նշանակութիւնը, միւսները օգտվում են միայն անգիկի լուծանելի աղերով եւ բացասում են անլուծանելի աղերի օգուտը, երրորդները վերջապէս, երբէք [illegible] կալոմելին եւ մոխրագոյն իւղին [illegible]: Սակայն [illegible], որ այդ տեսակ տգիտութիւնը [illegible] կողմնապաշ[illegible] ը վնաս է պատճառում, եւ պար[illegible] է [illegible] [illegible]ծում դորանից:

* * *

III. [illegible] վերջապէս, նաև այն դէպքերը, երբ [illegible] [illegible]յաջողութեան պատճառը գտնվում է [illegible] հիւանդութեան մէջ: Թողնելով մի կողմ բարդութիւնները, որոնք կարող են առաջ գալ եւ որոնք ըստ էութեան ոչ մի կապակցութիւն չունեն սիֆիլիսի հետ, բայց և այնպէս ծանրացնում են հիւանդի դրութիւնը,—պատահում է երեմն, որ հէնց հիւանդութիւնն սկսում է ընթանալ վատ և ծանր կերպով (տարաբաղդաբար այդ այդպէս է), յամառ կերպով չի ենթարկվում բժշկութեան և անորոշ ժամանակով պահպանում է իւր պատռողական բնաւորութիւնը, ու, վերջի վերջոյ, բանը վերջացնում է չատ վատ կերպով:

Ի ՅԻՇԱՏԱԿ [illegible] ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆՆ [illegible] 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ



Այդպիսի դէպքեր՝ ըստ իւրեանց բնութեան՝ լինում են երկու տեսակի: Մի քանիսները ընթանալով այդպէս ծանր, այսպէս թէ այնպէս, ներկայացնում են իրանցից սիֆիլիսի բոլորովին բնորոշ նշանները. նոցա արտաքին տեսքը, ընթացքը, նոյնպէս և հիւանդ հիւսուածքների կազմն ու բովանդակութիւնը—այդ բոլորը հաստատում է այդ հիւանդութիւնը: Ճիշտ է, այդպիսի դէպքեր քիչ են, նոքա, կարելի է ասել, բացառութիւն են կազմում:

Միւսները—այդ հիւանդոտ ձևերը—ըստ երևոյթին անմիջապէս սիֆիլիսից կախում չունեն և նորա հետ նոյնացրած չեն: Նոքա սիֆիլիսից տարբեր կլինիկական ընթացք ունեն. նման չեն հիւանդ հիւսուածքներին միկրոսկոպիկական կազմուածքով, եւ, զարմանալի կերպով չեն սիֆիլիսին, որովհետև նոցա վրայ .սնդիկն կտրտերեալ կերպով և ուժեղ չեն ազդում սնդիկը և եօդը, ինչպէս սիֆիլիսի իսկական երևոյթների վրայ:

Այս բոլոր առանձնայատկութիւնների հիման վրայ, այդ հիւանդոտ ձևերը ստացել են պարասիֆիլիտիկական փոփոխութիւնների անուն. (մոտիկ սիֆիլիսի, կարծես միայն կախում ունեցած լինի սիֆիլիսից: Նորանից առաջացած): Իբրև առաջին դէպքերի հակապատկեր, սոքա պատահում են սիֆիլիսի ժամանակ չատ յաճախ: Հարկ կայ կանգ առնել այս բազմազան երևոյթների վրայ. մանաւանդ որ մի քանիսները նոցանից մօտ կապակցութիւն ունեն մեր խօսակցութեան առարկայի հետ:

## ՁԱՐՈՐԱԿԻ ՍԻՖԻԼԻՍ

Այդ անուան տակ մտնում են զանազան տեսակի հիւանդութիւններ, որոնք ընթանում են չատ ծանր և

չարորակ կերպով։ Կռվելով վարակաթոյնի դէմ, հիւանդները հանում են վերջ ի վերջոյ կատարեալ քայքայման։ Եւ այն ժամանակ ստացվում է սիֆիլիտիկական քայքայում։ Պէտք է աւելի լաւ պարզել, թէ ինչ բան է այդ։

Անկասկած գոյութիւն ունի և այն տեսակի սիֆիլիս, որը միանգամից, հէնց սկզբից խորտակվում է իւր բոլոր ծանրութիւնով օրգանիզմի ույժերի վերայ. արտայայտում է իւր չարորակի առանձնայատկութիւնները և միանգամայն անմատչելի է բժշկական արուեստի ներգործութեան։ Նոյն բանը երբեմն նկատվում է ծաղիկ, քութէշ և ուրիշ չարորակի վարակիչ թոյների վերաբերմամբ։ Նոքա, համարեա թէ, անխուսափելի կերպով վերջանում են ծանր հետևանքով։

Բերեմ իբրև օրինակ մի երիտասարդ, գեղեցիկ, 19 տարեկան օրիորդի հիւանդութեան պատմութիւնը։ Նրան խաբել և վարակել էր անպիտանի մէկը։ Նա չըհամարձակվեց խոստովանել ծնողներին իւր կրկնակի դժբախտութիւնը։ Չէր բժշկվում և չորս ամիս անցած մտաւ Ս. Լիւդովիկ հիւանդանոցը ամենասարսափելի դրութեան մէջ։ Այս դէպքում մենք գործ ունինք նախ և առաջ, ֆիզիքական և բարոյական չափազանց մեծ տանջանքի և ույժերի խիստ սպառման հետ։ Հիւանդը սաստիկ գունատ էր, ոչինչ չէր ուտում, ջերմում էր և յաճախ տանջվում էր սիրտը ետ բերելով։ Բացի դրանից նա ունէր ամբողջ մաշկի վրայ ժամանակից դուրս արտայայտութիւններ, ըստ տեսքի նման անագան երրորդական սիֆիլիսի. այսինքն դոքա էին կեղտով ծածկված, փորված և խորն ընկած խոցեր, որոնք արագ կերպով, այնուամենայնիւ, խիստ թարախվում էին և ծածկված էին ընդարմացումի նեխված փառով։ Արդէն ոչ մի բանով չէր կարելի օգնել հի-



ւանդին.—մեր բոլոր ջանքերն ապարդիւն էին։ Չըկարողացաւ ազատել նորան և Աւգոստինեան միաբանութեան կոյսի անձնուրաց հոգատարութիւնը, որն առանց յոգնութեան կապում էր նորա անթիւ վէրքերը։ Մի քանի շաբաթից յետոյ նա հասաւ քայքայման ծայրայեղ սահմանին և մեռաւ։

Մի ուրիշ օրինակ։

Մի երիտասարդ, Աֆրիկայի հետազօտող, հիւանդանում է տաքոց-դողոցով, և մի քիչ յետոյ սիֆիլիսով։ Հէնց սկզբից սիֆիլիսը արտայայտվեց շատ ծանր ձևով, և բոլոր փորձերը բժշկել նորան, վերջանում էին անյաջողութեամբ։ Այդ աչքի առաջ ունենալով, հիւանդին լուրջ խորհուրդ տվին փոխել կլիման և վերադառնալ հայրենիք։ Հիւանդը եկաւ տուն սարսափելի դրութեան մէջ։ Նախ և առաջ, ինչպէս և առաջին հիւանդը, նա չափազանց թոյլ էր, գունատ, մաշված, ջերմում էր, ոչինչ չէր ուտում. երկրորդ, նրա ամբողջ մարմինը ծածկված էր խորն ընկած սիֆիլիտիկական վէրքերով, որոնցից մի քանիսը սկսել էին թարախանման քայքայվել. ամեն օր երևում էին մեծ քանակութեամբ նոր գումմեր, որոնք զարմանալու չափ արագ կերպով մեծանում էին ու իսկոյն ևեթ խոց էին դառնում։ Նա զգում էր խիստ ցաւեր ոսկորների և յօդերի մէջ։ Այդ բոլորը արագ կերպով դէպի վատն էր գնում. բանը հասաւ կատարեալ քայքայման և վերջացաւ մահով։ Աւելորդ է ասել, որ բոլորը, ինչ որ բժշկի ձեռքից գալիս էր, փորձված էր, որպէսզի ազատվէր երիտասարդ կեանքը։ Միայն չըփորձեցին մարմնի մէջ արիւն լցնել. թէպէտ ես այդ առաջարկել էի, բայց իմ խորհուրդը մնաց անլսելի։ Ոչ մի անգամ դեղերը այնքան թոյլ չէին ազդում, ինչպէս այս անգամ։

—Ինչ ասենք, լաւ էք դուք մխիթարում նոցա,— կասեն ինձ,—որոնք անբաղդութիւն էին ունեցել վարակվել սիֆիլիսով։—Այո, այդ բոլորը ուրախալի պատմութիւններ չեն,—կըպատասխանեմ ես,— բայց չմոռանաք, որ ես խոստացել եմ ասել ձեզ ճշմարտութիւնը, միայն լոկ ճշմարտութիւնը, և խօսքս պահեցի։ Սակայն դուք մի ենթարկվիք այս երկու կարդացած դէպքերի ողբերգական տպաւորութեանը. Թող նոքա ձեզ չըվախեցնեն, նոյնպէս և այն բոլորը ինչ որ ձեզ կըպատահի կարդալ մի որևիցէ այլ տեղ։ Աւելի լաւ է ձեր ուշադրութիւնը դարձնէք հետևեալ երկու հանգամանքի վրայ։

I. Այս տեսակ դէպքերը ոչ թէ հազուագիւտ են, այլ միանգամայն բացառութիւն են կազմում. բառի բուն նշանակութեամբ, նոքա եզակի և անսովորական են։ Ամբողջ իմ պրակտիկում ես դիտել եմ ոչ աւել քան վեց դէպք և այդ 45 տարուայ իմ անընդհատ բժշկական գործունէութեան ընթացքում, որն անցել է սիֆիլիսի այնպիսի բազմամարդ շուկաներում, ինչպէս Փարիզի Միդի-լուրսին և Ս. Լիւդովիկ հիւանդանոցը, որտեղ կարելի է, բառի բուն մտքով, տեսնել ամէն ինչ այդ մասին վերաբերեալ։

II. Պէտք է մտքում պահել նաև այն, որ այդ ծանր չարորակի հիւանդութիւնը երբէք չի լինում միայն սիֆիլիսի հետևանք. այստեղ միշտ խառնված է լինում նաև մի ուրիշ հիւանդոտ անյաջող պայման, այսինքն պատահում է, որ սիֆիլիսին միանում է մի ուրիշ հիւանդութիւն էլ, կամ նորա ընթացքը սուր կերպարանք է ստանում և վատանում զանազան անբարեյաջող հանգամանքների համախմբութեամբ։ Այդ կարելի է նկատել վերև բերած օրինակներից։



Մեր երկու դէպքերից առաջինում սիֆիլիսի ընթացքը բարդվեց հոգեկան տրամադրութեան ճնշումով —անյաջող սիրոյ յուսահատութիւնով, հիասթափումով, խղճի խայթոցով, ստորութիւնով և այլն. իսկ երկրորդ դէպքում—սիֆիլիսը ծանրաբեռնուած էր տաքոց-դողոց հիւանդութեան ներկայութիւնով։ Համախմբումն այդ երկու հիւանդութիւնների, ինչպէս յայտնի է, շատ և շատ վտանգաւոր է։ Ոչ, կրկնում եմ սիֆիլիսն ահաւոր է ոչ դորանով։ Այդպիսի դէպքերը—շատ հազուագիւտ են. գլխաւոր վտանգը և սարսափն այդ ախտի—հիւանդութեան այն ձևերի մէջն է, որոնց հետ մենք այժմ կըծանօթանանք։

## II. ՊԱՐԱՍԻՖԻԼԻՍՆԵՐ

Տարօրինակ և մինչև անգամ անյաջող մի տերմին. բայց և այնպէս նա ծառայում է իբրև նշան իսկապէս գոյութիւն ունեցող երևոյթների համար։ Մէկն ասել է, որ պարասիֆիլիսները «տեղափոխել են սիֆիլիսի ծանրութեան և սարսափի կենտրոնը»։ Այդ ճիշտ է։ Առաջները, երբ խօսք էր բացվում լուրջ բարդութիւնների հնարաւորութեան մասին սիֆիլիսի ընթացքում, աչքի առաջ ունէին գլխաւորապէս ներքին օրգանների սիֆիլիսը, և, մանաւանդ, նորա գումմերը գլխի ուղեղում, ողնուղեղում, լեարդում, երիկամունքներում, թոքերում և այլն։ Բայց այն ժամանակից, երբ սիֆիլիսի երևոյթներին միացան և պարասիֆիլիսները, այսինքն, երբ ակներև եղաւ այն կապակցութիւնը, որ կայ ողնուղեղի հիւծախտի և ուղեղի յառաջադիմող լուծութեան զարգացման ու սիֆիլիսի

մէջ,—այդ երկու հիւանդութիւնների յաճախ կրկնվելը և չափազանց մեծ վտանգը քաշեցին դէպի իրենց կողմը սիֆիլիսի հնարաւոր բարդութիւնների բոլոր ծանրութիւնը։ Սիֆիլիսի ժամանակ սկսեցին աւելի վախենալ (և հիմք կայ վախենալու) ողնուղեղի հիւծախտից, և առաւել ուղեղի յառաջադիմող լուծութիւնից։

Ես չեմ կամենում լինել մարգարէ (և վախենում եմ նոյն իսկ լինել), բայց ինձ թվում է, որ մի քանի տարուց յետոյ նոյնպէս (սիֆիլիսի կախումի տեսակէտից) կընայեն և լէյկօպլագիի վրայ, բերանի թաղանթի մաշկային այլասերման վրայ, սաղմային խեցգետինի—և, որ ամենասարսափելին է, լեզուի խեցգետինի վրայ։

Եւ իրենք հիւանդներն էլ հոտառութեամբ արդէն հասկացել են, թէ որտեղ է գտնվում գլխաւոր վտանգը։ Վերջին տարիները միայն լսում եմ հիւանդներից վախվխող հարցեր սպառնացող վտանգների մասին։ —«Ասացէք, բժիշկ, կարող էք Դուք ինձ ազատել ողնուղեղի հիւծախտից։ Ի սէր Աստուծոյ, ինձ համար արէք այդ, մի թողնէք, որ ես գժվեմ և կորչեմ ուղեղի յառաջադիմող լուծութիւնից, ինչպէս իմ բարեկամներից այսինչը կամ այնինչը։ Այս աշխարհում ամենից շատ վախենում եմ, որ ինձ այդ պատահի» և այլն և այլն։

Եւ մեր հիւանդների երկիւղը հիմնաւոր է, որովհետև այս երկու հիւանդութիւնների վատ համբաւը բոլորովին չէ չափազանցրած։ Այստեղ մենք մօտենում ենք մեր խօսակցութեան ամենավառ հարցին։

Ինչպէս գոյութիւն ունին մի շարք հիւանդութիւնների նշաններ, որոնք թէպէտ և կախումն ունեն սիֆիլիսից և անկասկած ծագում են նորա վնասակար ազդեցութեան տակ, բայց և միևնոյն ժամանակ չեն ենթարկվում հակասիֆիլիսական բժշկութեան, այն ինչ



սնդիկը ներգործում է այդ հիւանդութեան միւս երևոյթների վրայ հիմնաւոր, շատ ուժեղ և մինչև անգամ հրաշագործ կերպով։ Ինչպէս օրինակ այդ տեսակ հիւանդութեան նշանների, նայեցէք վզի մորթու այս սարօրինակ ախտի վրայ, որը ծածկված է փայլուն և մութ բծերով։ Այդ է, այսպէս կոչված, պիգմենտի սիֆիլիսը կամ թէ Վեներայի մանեակը։ Ի՞նչ կարող է անել այստեղ առանձնայատուկ բժշկութիւնը, մինչև անգամ գործադրված շատ եռանդուն կերպով։ Միանգամայն ոչինչ։ Բերեմ օրինակ։

Մի երիտասարդ կին մտնում է մեր պալատը սիֆիլիտիկական ցանի առիթով, որը տարածվելով, բաւական նշանակութեամբ, ամբողջ մարմնի վրայ, բաղկացած էր խոշոր հանգոյցներից և ունէր ապխտած խոզի մսի գոյն։ Բացի դորանից, մի կողմ թողնելով այդ հիւանդութեան երկրորդ, վաղ շրջանի միւս սովորական երևոյթները, նա ունի խիստ զարգացած պիգմենտի սիֆիլիս, որը թափանցիկ հաշիայի օղակներով բռնում է նորա ամբողջ պարանոցը։ Այս դէպքը բոլորովին տիպիկական է։ Նշանակվում է կանոնաւոր չափով սնդիկի բժշկութիւն։ Եւ ինչ ենք տեսնում։ Չորս-հինգ շաբաթից յետոյ ամեն ինչ անցնում է, բացի պարանոցի մաշկի խայտաբղէտութիւնից. նա անփոփոխ է մնացել։ Անցաւ նորից երեք ամիս և, այնուամենայնիւ, ոչ մի փոփոխութիւն այստեղ չեղաւ։ Նոյնպէս ինչ կարող է անել առանձնայատուկ բժշկութիւնը, մինչև անգամ մեծ չափերով, ողնուղեղի հիւծախտի դէմ, որի պատճառաբանվող կապը սիֆիլիսի հետ ներկայումս անվիճելի է։

Երբեմն—ոչ միշտական—բժշկութիւնը թուլացնում է և մինչև անգամ ոչնչացնում մի քանի հիւանդ նշաններ,

ինչպէս աչքերի մկանների պարալիչը (մկանների թուլութիւն) և պարալիչները (մկանների շարժողութիւնների կորուստը), խփող ցաւերը և միզելու խանգարումները։ (Ճիշտ է այս բոլորն այն տեսակ երևոյթներ են, որոնք իրանք և ինքնաբերաբար են թուլանում իրանց ուժի մէջ, կամ թէ բոլորովին անյայտանում)։

Մի քանի դէպքերում բժշկութիւնը շատ երևոյթի իսկապէս կանգնեցնում էր հիւանդութեան զարգացման շարունակութիւնը, պահում էր նորան, մխում էր տեղնուտեղը ողնուղեղի հիւծախտը. այդ էլ իհարկէ յաջողութիւն է։ Բայց միւս կողմից ինչքան աւելի է այս դէպքում անյաջողութիւնը։

Գոնէ մէկին, խնդրում եմ ձեզ, որը կարողանայ իրաւունքով պարծենալ, որ նա բժշկել է—այդ խօսքի իսկական մտքով—ողնուղեղի տիպիկական հիւծախտը։

Աւելի պակասը կասեմ. տեսել էք արդեօք մէկի լաւանալը, կամ թէ աչքի խնձորի ջղային հիւանդութեան զարգացման ընդհատումն ողնուղեղի հիւծախտի ժամանակ։

Ես գոնէ միշտ, անպայման միշտ, տեսել եմ այդպիսի դէպքերում իմ անյաջողութիւնս. իսկ ինչ կարող ենք անել մենք սնդիկով և եօդով—միասին կամ առանձին գործածած—այսպէս կոչված ստամոքսային կրիզների ժամանակ (ստամոքսի կծկվելու ժամանակ), ատրօպատիայի (յօդատութիւնների հիւանդութիւն և փոփոխութիւն նեարդային ծագումով), կամ հասարակ էկզոստօսների ժամանակ (ոսկորների հաստանալը), ողնուղեղի հիւծախտի, կամ միայն, գոնէ, խփող ցաւերի ժամանակ։

Ուղեղի յառաջացիմող լուծութեան ժամանակ բանը աւելի վատ է։ Այստեղ արդէն առանձնայատուկ



բժշկութիւնը բոլորովին անուժ է և ոչինչ չի կարող անել։

Ակադեմիայում, որտեղ մօտ օրերս քննվում էր յառաջացիմող լուծութեան յարաբերութիւնը դէպի սիֆիլիսը, բոլորեքեան եկան միաձայն վճռի—բայց այդ բանը պատահում է ոչ այնքան էլ յաճախ,—որ սնդիկի բժշկութիւնը, մինչև անգամ շատ զօրեղ կերպով, միանգամայն ճիշտ չէ այդ սարսափելի հիւանդութեան դէմ կռվելու համար. Նոյնը կարելի ասել և բոլոր այն հիւանդոտ ձևերի մասին, որոնք կազմում են պարասիֆիլիտիկ հիւանդութիւնների խումբը, ինչպէս լէյկոպլագիա (մաշկային այլասերումն բերանի լորձաթաղանթի վրայ), նեվրաստենիա (գրգռեցուցիչ թուլութիւն), պարասիֆիլիտական էպիլեպսիա, լծաւոր ախտակամաշկ և այլն։

Ճիշտ է, մի քանիսները մեր ընկեր բժիշկներից բոլորովին չեն ընդունում պարասիֆիլիսներ, բայց, դժբախտաբար, այս ժխտումը բոլորովին չէ ազդել վերջինների վրայ և չէ նպաստել նոցա անհետանալուն։ Այդ նոր հիւանդոտ ձևի տեսակի մասին ասվում էր, որ այդ բոլոր հիւանդ ձևերը առեղծված են միանգամայն ազատ կերպով, արուեստականօրէն և իսկապէս գոյութիւն չունեն. որ նոցա մէջ չկայ մի որոշ բան միանման, և բոլորովին բացակայում է մի պատճառաբանող կապ։ Ենթադրենք, որ այդ բոլորն այդպէս է։ Բայց մինչև որ ես կըհասնեմ այն բախտաւոր օրին, երբ ողնուղեղի հիւծախտը կըսկսի նոյնպէս ենթարկվել սնդիկի ազդեցութեանը, ինչպէս ամեն մի սիֆիլիսի երևոյթ, իսկ ուղեղի յառաջացիմող լուծութիւնը կըսկսի անհետանալ առանձնայատուկ բժշկութիւնից, ինչպէս գումման, մինչև այդ ես հարկադր-

ված եմ զանազանութիւն անել նորա և իսկական սիֆիլիսի մէջ և արտայայտում եմ այդ զանազանութիւնը պարասիֆիլիս՝ սիֆիլիսին մօտիկ, սիֆիլիսից կախում ունեցող՝ հիւանդութիւն խօսքով։ Իսկ առայժմս չեմ կարող հրաժարվել իմ հայեացքից և հեռանալ իմ տեսակէտից։

Ի՞նչ կարելի է արդեօք անել մխիթարական մի բան այդ բոլոր պարասիֆիլիսների յետագայ հաւանական զարգացման վերաբերմամբ, եթէ նոքա արդէն արտայայտվեցին և սկսեցին երևալ։ Ի հարկէ ոչինչ ուրախալի։ Պարասիֆիլիսները—այդ ճիշտ և կարճ ասելով—սիֆիլիս են, որ չեն ենթարկվում բժշկութեան։ Երևակայեցէք ձեզ, մինչև որ աստիճան կարող է հանել սիֆիլիսը, որ չի ուզում անցկենալ և չի ենթարկվում բժշկութեան, մանաւանդ, երբ նա ստանում է այն տեսակ հիւանդութիւնների ձև, ինչպէս ողնուղեղի հիւծախտ, ուղեղի յառաջադիմող լուծութիւն և լէյկոպլազիա։

Ահա ինչու ես այդ մասին անդադար պնդում էի և գրում. այն ժամանակուանից, երբ պարզվեց, որ սիֆիլիսին մօտենում են և պարասիֆիլիսները, վտանգը այդ հիւանդութեան հետևանքից սարսափելի մեծացաւ։ Անտարակոյս այդ աւելումն ու միացումը, մի նոր կարգ ծանր և յաճախ անբժշկելի հիւանդութիւնների ու սիֆիլիսի առանց այն էլ անթիւ երևոյթների հետ, դարձնում են նորա վտանգները աւելի հաւանական և աւելի նշանաւոր, բաց անելով նորանոր դժբախտութիւնների, կարծես, մի անվերջ հորիզոն։

Այդ, իսկապէս, այդպէս է։ Դորա հետ պէտք է հաշտվել և անմտածված գրգռման տակ հարկաւոր չէ ծածկել աչքերը այդ բոլորի վրայ։ Եւ այնուամենայնիւ, ես



խնդրում եմ դեռ եզրակացութիւն չանել այս բոլոր ասածներից։ Որքան և վշտալի է այն բոլորը, ինչ որ ես նոր ասացի, բայց Աստուած ողորմած է, և կան հանգամանքներ, որոնք թուլացնում ու ուղղում են այդ չարիքի ույժը։ Ծանօթանանք դոցա հետ։

*
* *

Անվիճելի է. Մենք չենք կարող բժշկել ոչ ողնուղեղի հիւծախտը, ոչ ուղեղի յառաջադիմող լուծութիւնը ոչ էլ լէյկօպլազիան. բայց մենք—բանից դուրս է գալիս որ—մինչև որոշ աստիճան կարող ենք ազդել այդ երեք գլխաւոր պարասիֆիլիսական անբաղդութիւնների զարգացման հնարաւորութեան վրայ և նոցա առաջն առնել։

Հետևեալ գլուխներից մէկում ես պէտք շօշափեմ մի լուրջ հարց սիֆիլիսի նախազգուշացնող բժշկութեան մասին, ընդհանրապէս։ Բայց, չը ցրվելու համար, այս բոպէին մատնանիշ կանեմ թէ ինչ կարելի է անել, որ պարասիֆիլիսների զարգացման առաջն առնվի։

Առաջին ազատարար դերը խաղում է այստեղ առողջապահութիւնը. մանաւանդ այս կարևոր է երեք հիւանդոտ ձևերից մէկի վերաբերեալ, այսինքն լէյկօպլազիայի ժամանակ, որի գլխաւոր սարսափը նրանումն է պարունակվում, որ բերանի թաղանթի մաշկային այլասերումը փոխվում է երբեմն խեցգետնային այլասերման։ Լէյկօպլազիա չեն ունենում, գոնէ, մեծ մասամբ նոքա, որոնք չեն ծխում կամ շատ չափաւոր են ծխում։

Առայժմս ես բերում եմ այդ փաստը. Ժամանակին ես յոյս ունեմ դուրս գալ մի շարք ստատիստիկական թուերով և դիտողութիւններով և կապացուցանեմ այդ փաստաթղթերով։ Ի՞նչ է դրանից դուրս գա-

լիս, այդ պարզ է ինքն ըստ ինքեան։ Եւ այդ պատճառով ես կարծում եմ, որ համոզել սիֆիլիսով վարակուածին թողնել ծխելը, դա նշանակում է մատուցանել նրան շատ մեծ ծառայութիւն։

Բայց ճիշտ ասած, այդ այնքան էլ հեշտ չէ։ Ծխելու զսպելը ամենալաւ նախազգուշական միջոցն է, որ չըզարգանայ լէյկօպլակիան և նրա հետևանքները։ Ծխելու վնասի ամենալաւ ապացոյցը կարող է լինել այն հանգամանքը, որ քաղցկեղի զարգացումը լեզուի և այտերի վրայ, որտեղ առաջ կային լէյկօպլակիայի սպիտակ բծեր, գրեթէ երբէք չի լինում կանանց մօտ, որոնք ինչպէս յայտնի է, կամ բոլորովին չեն ծխում կամ թէ քիչ են ծխում։ Նոյնը կարելի է ասել և աճող անդամալուծութեան մասին։

Ներկայումս կարելի է արդէն դուրս բերել ընդհանուր գումարն այն պայմանների, որոնք առաջացնում են նրան։ Դորա արտայայտվելու էական, մշտական և, մինչև անգամ, անհրաժեշտ պատճառն է սիֆիլիսը, իսկ հեշտացնում և շատ տրամադրում են այդ հիւանդութեան զարգացմանը նեարդային ժառանգականութիւնը, խմիչքեղէնի ի չար գործածելը և ամեն տեսակ յոգնածութիւն (լինի դա աշխատանքից, գործերից, հոգսերից, զուարճութիւններից, կամ թէ բարձր դասակարգին վայել կեանքից—բոլորը միենոյնն է)։ Եւ ահա, հեռացնելով և դուրս հանելով այդ երկու վերջին փաստերը (ոգելից խմիչքեղէնը և յոգնածութիւնը), խուսափելով նեարդային սիստեմի ամեն մի գրգռումից, հիւանդութեան առաջն առնելու գործում կարելի է մեծ հետևանքների հասնել։ Տարաբաղդաբար, ես չեմ կարող նոյնն ասել ողնուղեղի հիւծախտի մասին։ Այստեղ միայն յաջողվեց գտնել այս հիւանդութեան անխուսափելի



սկզբնապատճառը։ Բայց մենք առայժմս չենք իմանում, թէ ինչն է տրամադրում, հեշտացնում այդ հիւանդութեան զարգացումը։

Տեսնենք այժմ, թէ ինչ կարող է անել հակասիֆիլիտիկական բժշկութիւնը իբրև նախազգուշութիւն պարասիֆիլիտների զարգացման դէմ։ Այդ հարցը վերին աստիճանի կարևոր է, բայց պատասխանել դրան շատ դժուար է, որովհետև, ինչքան ինձ յայտնի է, այդ հարցի վերաբերեալ դեռ ոչ մի աշխատութիւն չէ հրատարակված։ Եւ ահա ես փորձ արեցի չօշափել այդ հարցը (նկատեցէք միայն չօշափել), նայելով իմ անձնական դիտողութիւններին, մեծ քանակութեամբ գրութիւններին, որ վաղուց ի վեր ես ունիմ և գրում եմ։ Եւ ահա ինչ հետևանք ստացվեց այդ հետաքրքիր քննութիւնից։

Ես աշխատեցի պատասխանել ինձ, թէ ինչպէս էին բժշկվում հէնց սկզբից այն հիւանդները, որոնց յետագայ ժամանակում պատահեց ողնուղեղի հիւծախտ կամ ուղեղի յառաջադիմող լուծութիւն։ Ես «սկիզբ» խօսքը հասկանում եմ որպէս սիֆիլիս հիւանդութեան առաջին տարիները։ Կարող էր այդ բժշկութիւնը, որից հիւանդները յոյս ունէին բժշկված լինել և որը պէտք է, այսպէս ասած, ապահովացնէր նոցա ապագայում,— կարող էր համարվել իբր իսկական ույժի համեմատ նախապաշտպան այդ հիւանդութիւններից, թէ ոչ։ Եղել էր արդեօք այդ բժշկութիւնը ուժեղ կամ թոյլ, երկարատև կամ կարճատև, լուրջ կամ բոլորովին անբաւարար։ Ահա ինչին պէտք էր ստանալ պատասխան։ Եւ ահա, որպէսզի այդ պատասխանն ստանամ, ես վարվեցի հետևեալ կերպով։

Հաւաքելով ողնուղեղի հիւծախտի և ուղեղի յա-

առաջադիմող լուծութեան բոլոր իմ դէպքերը, ես դուրս դուրս հանեցի այն դէպքերը, որտեղ պարզ և որոշ կերպով մատնանիշ էր արած, թէ ինչու մէջն էր կայացել սիֆիլիսի սկզբնական բժշկութիւնը։ Յետոյ ես պարզեցի թէ ինչ տեսակ էր այդ բժշկութիւնը, այսպէս ասած, ինչ որակի էր, և, վերջապէս՝ այդ տեսակէտից՝ ես համախմբեցի բոլոր այդ դէպքերը չորս տեսակի։ Այստեղ կային, նախ և առաջ, այնպիսի դիտողութիւններ, որտեղ բոլորովին չէ եղել բժշկութիւն կամ եղել է բոլորովին չնչին (մի տարուց պակաս). երկրորդ՝ այնպիսիները, որտեղ բժշկութիւնը է տևել մի—երկու տարի. յետոյ այնպիսիները, որտեղ բժշկութիւնը կատարված է եղել երկու—երեք տարի, և, վերջապէս, այնպիսիները, որտեղ բժշկութիւնը տևել է աւելի քան երեք տարի։

Եւ ահա ջոկելով ու բաժանելով այդպէս, ես ստացայ հետևեալը։

I. Ուղեղի յառաջադիմող լուծութիւն. 79 դէպքից։

1) Առաջին դասակարգում (չբժշկված, քիչ բժշկված, կամ շատ մակերեւոյթաբար) 44 դէպք։

2) Երկրորդ դասակարգում (կարճատև բժշկութիւն, անուանենք այսպէս իբրև զանազանութիւն միւսներից) 19 դէպք։

3) Երրորդ դասակարգում (բժշկութեան միջին տևողութիւն) 12 դէպք։

4) Չորրորդ դասակարգում (վերջապէս, հիւանդը բժշկված) 4 դէպք։

II. Նոյնն էլ ստացվեց նաև ողնուղեղի հիւծախտի 576 դէպքերից։

1) Առաջին խմբում 411 դէպք. չնչին կերպով բժշկված։



2) Երկրորդ խմբում 103 դէպք. կարճատև բժշկված։

3) Երրորդ խմբում 37 դէպք. միջակ բժշկված։

4) Չորրորդ խմբում 25 դէպք. լաւ և լուրջ կերպով բժշկված։

Միւս կողմից ներկայումս բոլորքեան համաձայն են, որ սիֆիլիսի հիմնաւոր բժշկութեան կուրսերը համարվում են միայն նոքա, որոնք երեք տարուց ոչ պակաս են տևել։ Ուստի միացնելով երեք խմբերի բոլոր դէպքերը, որտեղ բժշկութիւնը եղել է ոչ երեք տարի, և այդ դէմադէմ դնելով չորրորդ խմբի թուերին,—որտեղ միայն եղել է հիմնաւոր բժշկութիւն,— մենք կըստանանք հետևեալ հետևանքները.—

1. Ուղեղի յառաջադիմող լուծութեան համար՝
Պակաս բժշկութեան դէպքում—75 հ.
Հիմնաւոր բժշկութեան դէպքում—4 հ.

2. Ողնուղեղի հիւծախտի համար՝
Պակաս բժշկութեան դէպքում—551 հ.
Հիմնաւոր բժշկութեան դէպքում—25 հ.

Հաշվելով, աւելի հասկանալիութեան համար, այս թուերը տոկոսի վերայ, մենք կըստանանք հետևեալը, 100 դէպքից ուղեղի յառաջադիմող լուծութիւնը զարգացաւ՝ սիֆիլիսի անբաւարար բժշկութիւնից՝ 95 անգամ։ Նոյն հիւանդութիւնը 5 անգամ պատահեց նոցա, որոնք հիմնաւոր կերպով բժշկվել էին։

Նոյն հետևանքը ստացվում է և ողնուղեղի հիւծախտի համար։

Ողնուղեղի հիւծախտը զարգացաւ սիֆիլիսի անբաւարար բժշկութիւնից 95,6 անգամ, նոյն հիւանդութիւնը՝ հիմնաւոր բժշկվածների համար՝ սիֆիլիսից 4,4։

Այս թուերը բաւական պերճախօս են և կարիք

չըկայ նրանց՝ պարզելու...:

Տրամաբանական եզրակացութիւնը այդ բոլորից հետևեալն է.—

Սնդիկով բժշկվելը կարելի է համարել փրկարար և յուսալի կերպով նախապաշտպանող ուղեղի յառաջացող լուծութիւնից և ողնուղեղի հիւծախտից, եթէ և ոչ միշտ առանց բացառութեան, յամենայն դէպս ոչ սակաւ և հաստատ կերպով. այսպէս ուղեղի յառաջացող լուծութեան և ողնուղեղի հիւծախտի 100 դէպքում, որոնք երևացին սիֆիլիսով վարակվածների մօտ, 95 անգամ հիւանդութիւնը զարգացել էր նոցա մօտ, որոնք անբաւարար կերպով կատարել են հակասիֆիլիսական բժշկութիւն, և միայն 5 անգամ (նկատեցէք տարբերութիւնը) նոցա մօտ, որոնք բժշկվել են հիմնաւոր կերպով.

Ո՞վ երաշխաւոր կըլինի, որ այդ չնչին թիւը կարող էր աւելի պակաս լինել, եթէ բժշկութիւնը կատարված լինէր աւելի լաւ, կամ աւելի ուժեղ կերպով, կամ աւելի երկարատև, կամ աւելի լաւ կարգադրած, այնպէս որ ամենալաւ հետևանքներն ստացվէին. Ամեն ինչ ստիպում է մեզ մտածել, որ այդպէս էլ կըլինէր. Հարկ կա՞յ արդեօք ասել, որ բոլոր այդ մտածմունքները բաւական մեղմացնում են նախագուշակը՝ սիֆիլիսի ժամանակ պարասիֆիլիսների արտայայտվելու սպառնացող հնարաւորութեան մասին.

## ԿԱՐԵԼԻ՞ Է ՍԻՖԻԼԻՍԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Այս հարցը շատ կարևոր և շատ հասկանալի է, և ամենքից շատ զբաղեցնում է ու անհանգստացնում



հիւանդներին. Քանի անգամ այդ առիթով պատահում էր լսել հիւանդների գանգատները. «Այո, բժիշկ, ասում են նոքա, ես չեմ կասկածում, որ Դուք կազատէք ինձ հիւանդութեան այն նշաններից, որոնք կան ինձ մօտ այժմ. Բայց շատ եմ վախենում ապագայի համար. Կարո՞ղ էք ինձ խոստանալ, որ կըգայ մի օր, երբ ես կարիք չեմ ունենալ վախենալ այդ սարսափելի հիւանդութիւնից. Կարո՞ղ էք երաշխաւորել, որ ես չեմ գըժվի, որ ինձ չի պատահի անդամալուծութիւն. Օ, ես սարսափում եմ այն մտքից, որ չեմ խուսափելու գժանոցից և հաշմանդամի ինքնաշարժ բազկաթոռից» և այլն.

Ի պատասխան այս բոլոր հառաչանքների և գանգատների, իմ կարծիքով, բժիշկը կարող է տալ երեք հետևեալ պատասխանները.—

1. Այո, սիֆիլիսի հետևանքների առաջն առնելը ապագայում հնարաւոր է, բայց համոզվել դորանում կարելի է միայն կանոնաւոր, բաւական ուժեղ և երկարատև բժշկվելուց յետոյ, դրա հետ միասին պէտք է առողջ կեանք վարել, կատարելով այս բոլոր պայմանները, սիֆիլիս ունեցողը կարող է առանց երկիւղի նայել ապագայի վրայ և իւր հիւանդութեան բարեյաջող վերջանալու վրայ յոյս դնել.

2. Այս բոլոր ասածը կանոն է, որից բացառութիւններ լինում են շատ և շատ քիչ.

3. Մինչև անգամ կարելի է յուսալ, որ այդպիսի բացառութիւններն աստիճանաբար, կըդառնան աւելի և աւելի սակաւ, երբ սիֆիլիսի բժշկութեան հարցը աւելի կըպարզվի և ուսումնասիրված կըլինի, և երբ կըմանան գործածել սնդիկն աւելի մեծ չափով և հեշտ կերպով ծծվող ձևով (ինչքան բան պարզեցին մեզ այդ տեսակէտից մորթու տակ արւող սրսկումները). Միննոյն

ժամանակ հարկաւոր է, որ ինքը բժշկութիւնը դառնայ մատչելի հիւանդների մեծ քանակութեան համար։

Բայց ես տեսնում եմ, ընթերցող բարեկամներ, որ իմ երեքտակ պատասխանը լիովին ձեզ չի բաւականացնում։—«Սկզբում դուք մեզ մխիթարեցիք և միանգամայն յոյս տուեցիք, իսկ մի փոքր յետոյ դրեցիք մի շարք պայմաններ։ Այդ ինչպէս հասկանալ, այստեղ կայ ինչ որ չըվերջացած բան։ Այդ ինչ բացառութիւններ են։ Մի խօսքով. ինչքան են լինում այդ անբաղդ, անյաջող դէպքերը և ինչ յարաբերութիւն ունեն այն դէպքերի հետ, որոնք լաւ վախճան ունեն։ Ի՞նչքան են նոքա տոկոսի հաշուով, աղաչում ենք ձեզ, ասացէք այդ որքան կարելի է ճիշտ եւ որոշ կերպով»։

Թուաբանական ճշտութիւն ստանալ, ես ձեզ կըպատասխանեմ, այստեղ դեռևս անկարելի է։ Դուրս բերելու համար միջին գումարը, հարկաւոր էր ունենալ ձեռքի տակ մեծ ստատիստիկական նիւթ, իսկ այդպիսին չըկայ դեռևս։ Բայց մի բանում ես ինձ համարում եմ իրաւունք ձեզ համոզելու, այդ այն է, որ սիֆիլիսը, երբ լաւ և երկար ժամանակ է բժշկվել, երբ անցել է կանոնաւոր և առողջ կեանքի պայմաններում, շատ և շատ սակաւ պատահում է, որ չի ենթարկվում բժշկութեան և տալիս է իր մասին իմանալ քիչ թէ շատ հեռու ապագայում՝ հիւանդութեան վտանգաւոր ուշ վերադարձի բռնկումով (ռեցիդիվիզմ)։ Ձեզ համար ես մինչև անգամ համարձակվում եմ կրել ոչ այնքան ճշտապահ և հիմնաւոր հաշուապահի անունը և կասեմ ձեզ, որովհետև դուք անպատճառ ձգտում էք պատասխան ստանալ թուերով, որ, մօտաւորապէս և նախապէս, ես հաշվում եմ անբաղդ դէպքերի յաճախակի լինելը սիֆիլիսի ժամանակ 3—5%։



Այսինքն այդ նշանակում է—իմ անձնական դրութիւնները և դիտողութիւնները տալիս են ինձ հիմք ասելու այդ—որ 100 սիֆիլիսի լաւ բժշկված դէպքերից 3—5 ցոյց են տալիս անորոշ ժամանակով իրանց այս և այն նշանները։ Մնացած բոլոր 95—97 դէպքերը լռում են, այսպէս ասած, ոչնչանում են, անվնաս են դառնում, և մի խօսքով—այնպէս են ընթանում, կարծես թէ բոլորովին չեն էլ եղել։

Աչքի առաջ ունեցէք, որ հաստատ կարելի է հասնել աւելի մեծ հետևանքի։ Բանը նրանումն է, որ այս ստատիստիկան կազմված է վաղուցուայ դէպքերի հիման վրայ. այն դէպքերի հիման վրայ, որոնք տեղի են ունեցել քսան տարի առաջ, այն ինչ այդ ժամանակամիջոցում հիւանդութեան բժշկութիւնը բաւական կատարելագործվել է։ Եւ մենք իրաւունք ունինք սպասելու, որ ապագայում հետևեալ 20 տարուայ ստատիստիկական կըտայ մեզ աւելի մխիթարական հետևանքներ։

## ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

*Սիֆիլիսի վիճակը եւ նորա վերջը բացառապէս կախում ունին նախապաշտպանողական բժշկութիւնից.—*

—Եւ այսպէս,—դուք կասէք,—վերևում ասածների հիման վրայ, պէտք է հաւատալ, որ սիֆիլիսի նախապաշտպանողական բժշկութիւնը իսկապէս օգտաւէտ է։

Ոչ միայն հաւատալ,—կըպատասխանեմ ես,—բայց և հարկաւոր է մարմնացնել այդ կեանքում՝ ի բարօրութիւն հիւանդների։ Ես սիրով այս բոլէխ կապացու-

ցանեմ սիֆիլիսի այդպիսի նախապաշտպանողական բժշկութեան իսկական օգուտը նորա յետագայ ընթացքի և, առհասարակ, նորա վիճակի համար։ Այդպիսի օրինակները շատ հասկանալի և համոզեցուցիչ են։

Ահա նոքա.—

Պատահում է լսել։—«Սնդիկը բժշկում է սիֆիլիսի արտայայտութիւնները, նշանները, և միայն այդ, իսկ իրան սիֆիլիսին չի լաւացնում։ Նա կոխում, մաքրում է օրգանիզմը, ապխտակեցնում նրան, բայց չի ազդում իսկական հիւանդութեան վրա։ Դա պալիատիւ է, կարելի է ասել, բժշկող միջոց արդէն երևացած նշանների համար, բայց դա հակաթոյն չէ՝ ոչ նախազգուշացնող և ոչ էլ առաջն առնող դեղ» և այլն։

—Մեծ մոլորութիւն է, կըպատասխանեմ ես։ Նախ և առաջ, ես չեմ կարող երևակայել, թէ այդ ինչպէս է, որ սնդիկն ազդում է այնպէս անկնյայտնի կերպով սիֆիլիսի նշանների և ցաւերի վրայ, բայց բոլորովին չի ներգործում հիւանդութեան սկզբնապատճառի և հէնց իսկ հիւանդութեան վրայ։ Ես հրաժարվում եմ հասկանալ, թէ ինչպէս դեղը կարող է թողնի ամբողջ վնասակար ազդեցութիւնը թուլացնել, ջնջել նորա արտայայտութիւնը մեր՝ մարմնի բոլոր մասերում և անկիւններում, ու, միևնոյն ժամանակ, բոլորովին չը դիպչել նորա ոյժերին, չըվնասել նորա ոյժերին, չըվնասել հիւանդութեան սկզբնապատճառին (ինչ որ էլ դա լինի)։ Բայց ենթադրենք, որ այդ այդպէս է, և միայն ես ընդունակ չեմ այդ հասկանալու, ու թողնելով դա մի կողմ, տեսնենք՝ թէ ուրիշ ինչ բան կարող է մեզ համոզել։

Ինձ թվում են շատ համոզեցուցիչ հետևեալ չորս ենթադրութիւնները, որոնք և ներկայացնում եմ ձեր հայեցողութեան։ Այն ինչի, մասին կխօսվի, ունի բուն



բժշկական ապացոյցերի նշանակութիւն, բայց միևնոյն ժամանակ կարող է դիմանալ և առողջ դատողութեան քննութեանն առհասարակ։

I. Սնդիկն անվիճելի կերպով ունի նախազգուշողական ներգործութիւն հիւանդութեան երկրորդական վաղ շրջանի վրայ։ Համեմատեցէք միայն, թէ ինչպէս է ընթանում հիւանդութեան երկրորդական վաղ շրջանը, երբ սիֆիլիսի արտայայտութիւնները բժշկվում են և բժշկվում են իւր ժամանակին, սկսած շանկրի երևալուց, և այն, թէ ինչ է անում սիֆիլիսը նրա հետ ով չէ բժշկվել, կամ անբաւարար կերպով է բժշկված։

Վերջինների համար այդ ժամանակամիջոցը լի է հիւանդութեան նշաններով. բոլորը է.. մի չի կարելի հաւաքել. այստեղ ամեն ինչ կայ. և մաշկի զանազան բազմաթիւ հիւանդութիւններ, բերանի խոռչի, կոկորդի, սեռական օրգանների և յետոյքի սակ թաղանթային սիֆիլիսներ, եղունգի և նորա շուրջը սիֆիլիտիկական փոփոխութիւններ, լիմֆատիկ խուլերի ուռոյցք, մազերի թափուել, յօդացաւութիւններ, մկանների զանազան ցաւեր կամ իսկական նեարդային գլխացաւեր, և, երբեմն, մինչև անգամ աչքի ծիածանաթաղանթի և ուրիշ թաղանթների բորբոքումն, ոսկրամաշկի բորբոքումն, ոյժերի նեարդային թուլութիւն. տենդային երևոյթներ և այլն։

Եւ ընդհակառակն այն մարդիկ, որոնք բժշկվում են հիւանդութեան սկզբից և միևնոյն ժամանակ հիմնաւոր կերպով, այս ամբողջ հիւանդութեան շրջանը՝ լաւ ուշադրութիւն դարձրէք՝ ինչպէս կանոն—նոցա մօտ արտայայտվում է չնչին երևոյթներով և միևնոյն ժամանակ այդպիսի դէպքերում բոլոր նշանները բոլորովին մակերևոյթական և լաւ բնութիւն ունեն։ Այ-

սինքն. բոլոր եղածը մի քանի երրորդական բռնկումներ են, ինչպէս օր. ոչ-առատ բծաւոր ցան, մի քանի թաց բծեր բերանի խորշում (մանաւանդ թաղանթների վրայ). մի քանի քոս գլխի մազերում, վզի խուլերի ուռուցք և այս է բոլորը:

Կան մինչև անգամ այնպիսի հիւանդներ, որոնք շնորհիւ բժշկութեան բոլորովին ծանօթ չեն երկրորդական, հիւանդութեան ընդհանուր արտայայտութիւնների հետ: Այդպիսի դէպքերը, ճիշտ է, հազուադէպ են, բայց և այնպէս պատահում են:

Տեսնելով այդպիսի կրճատումն, սիֆիլիսի երկրորդական երևոյթների ույժերի պակասումն, կարելի՞ է արդեօք դորանից յետոյ չընդունել սնդիկի ներգործութիւնը սիֆիլիսի վրայ:

Եւ ինչպէս կարող էր նա այդ բոլորը անել, եթէ չըներգործէր հիւանդութեան հէնց սկզբնապատճառի վրա, չըպաշտպանելով օրգանիզմը նորա այն երևոյթներից, որոնք առանց նորա միջամտութեան չէին խուսափիլ արտայայտվելուց: Բացասել այդ—նշանակում է ուրանալ ակնյայտնի մի բան:

II. Երկրորդ ապացոյց.—սնդիկն անկասկած ներգործում է նախազգուշացնող կերպով սիֆիլիսի երրորդական (անագան) շրջանի արտայայտութիւնների վրայ:

Այդ երևում է հետևեալ երկու փաստերից: Նախ և առաջ—երրորդական անագան նշանները պատահում են շատ յաճախ այնպիսի սիֆիլիսով հիւանդների մօտ, որոնք կամ բոլորովին չեն բժշկվել, կամ քիչ են բժշկվել:

Եւ ընդհակառակը, հիւանդութեան այդ անագան երևոյթները պատահում են շատ սակաւ նոցա մօտ, որոնք լուրջ կերպով և երկար ժամանակ են բժշկվել,



մի խօսքով բժշկվել են ինչպէս հարկն է:

Այդ հաստատում են դիտողութիւնները:

Ահա, օրինակ, ստատիստիկական թուեր, որոնք ես այստեղ չեմ բերելու, բայց որոնց կարելի է գտնել ուրիշ տեղերում (սիֆ. բժշ. Ֆուրնիէի): Նրանք տալիս են ինձ հետևեալ հետևանքները. գլխի ուղեղի սիֆիլիսի 100 դէպքերից, որտեղ կարելի է ստանալ որոշ տեղեկութիւններ նախապէս բժշկվելու մասին, հիւանդութիւնը զարգացել էր միայն 5 անգամ այնտեղ, որտեղ առաջուց եղել է լուրջ բժշկութիւն, իսկ մնացած 95 դէպքերն ընկնում են այն հիւանդների վրայ, որոնք բժշկվել են միայն կարճ ժամանակ, և ինչպէս, երևում է, անբաւարար կերպով: Իսկ այդ նշանակում է, ուրիշ խօսքերով, որ ուղեղի սիֆիլիսը 19 անգամ աւելի ուշ է զարգանում լուրջ բժշկութիւնից յետոյ, քան թէ անբաւարար բժշկութիւնից: Եւ այստեղից այն եզրակացութիւնն է հետևում, որ սնդիկը մի միջոց է, որը ներգործում է, անկասկած, նախազգուշական կերպով գլխի ուղեղի սիֆիլիսի զարգացման հնարաւորութեան վրայ:

Ես կարող եմ նոյնպէս ապացուցանել ուրիշ թուերով, որոնք այստեղ չեմ բերելու և որոնց ես ընտրել եմ սեփական տեղեկութեան համար, որ ոչ պակաս նախազգուշողական ուժով սնդիկն ազդում է սիֆիլիսի նաև միւս անագան նշանների վրայ, այսինքն ներքին օրգանների, քիմքի, քթի և կոկորդի դուամական հիւանդութիւնների վրայ:

Ուրեմն, ընդհանրապէս վերցրած, ինչպէս մենք նոր համոզվեցինք, սնդիկն ունի միևնոյն ազդեցութիւնը թէ անագան երրորդական սիֆիլիսի վրայ, և թէ վաղ երևացող—երկրորդականի վրայ: Նա թեթևացնում

է հիւանդութեան այդ շրջանների ընթացքն այնպէս, որ տալիս է հնարաւորութիւն աւելի սակաւ արտայայտվել հիւանդութեան ուշ բռնկումներին (այսպէս կոչված տերցիարիզմ)։ Մի խօսքով, սնդիկը նախապաշտպանում է, նախազգուշացնում, դժբաղդաբար ոչ-մշտապէս, սակայն շատ յաճախ, հիւանդութեան ուշ շրջաններում ծանր արտայայտութիւնների զարգացումը։

III. Երրորդ ապացոյցը. սնդիկն ամենքից լաւ է նախապաշտպանում, որ սիֆիլիսը չանցնի, ժառանգականութեան վրայ։

Ով չի իմանում, որ առանց բժշկութեան, սիֆիլիսը թողնված իւր ընթացքին կարող է անցել ժառանգաբար և հասցնել ամենածանր հետեանքների՝ ինչպէս օր. վիժումներ, ժամանակից առաջ ծննդաբերութիւններ մեռած կամ անկենսունակ պտուղներով, թոյլ, նիհար երեխաներ բերելով, սիֆիլիսի նշաններով և ոչ երկար ապրող. բացի դորանից այդ բոլորը կարող է կրկնվել. և մինչև անգամ—ինչպէս կանոն—կրկնվում է մի քանի յղութիւնների ընթացքում։

Այսպէս կարելի է տեսնել, թէ ինչպէս սիֆիլիսով վարակված կանայք, կամ մինչև անգամ առողջ կանայք, որոնք յղիանալով հիւանդ ամուսիններից երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթն անգամ շարունակ, կամ աւելի յաճախ, վիժում են. կամ թէ մեռած ու անկենսունակ երեխաներ են ծնում։

Բայց, այդ միենոյնը նկատվում է արդեօք այն հիւանդների մօտ, որոնք բժշկվել են և ենթարկվել են բժշկութեան լաւ և երկար ժամանակ։ Ոչ։ Հազար անգամ ոչ։ Հէնց այստեղ ակնյայտնի կերպով պարզվում է առանձնայատուկ բժշկութեան փայլուն նախազգուշացնող ազդեցութիւնը ժառանգականութեան վրայ։



Լաւ, խորն ըմբռնեցէք այս թուերը. չբժշկվողների մօտ երեխաների մահը հասնում է 62%-70%, 80%, 82%. իսկ հիմնաւոր բժշկութիւնների ժամանակ սերունդի մահը չի անցնում 3%-ից։

Այդպիսի թուերը կարօտ չեն, ի հարկէ, բացատրութիւնների, և բոլորեքեան այժմ—ես այդ կարող եմ համարձակ ասել—ընդունում են, որ սիֆիլիսի այս բոլոր անբախտութիւնները՝ վիժումները և նորածինների մահացման մեծ քանակութիւնը, առաջանում են միայն բժշկութեան բացակայութիւնից, երբ հիւանդութիւնը, այսպէս ասած, թողնված է լինում ամբողջովին իւր ընթացքին. մի խօսքով, այնպիսի դէպքերում, երբ նա վատ կամ բոլորովին չէ բժշկված։ Եւ եթէ ձեր մէջ մնացել է կասկածի նոյն իսկ մի փոքր նշոյլ, դուք վերջնականապէս կը համոզվէք բոլոր վերև ասածների ճշմարտութեան մէջ, ծանօթանալով հետևեալ կլինիկական դիտողութիւնների հետևանքների հետ։

Սիֆիլիս ունեցող ընտանիքում լինում են դէպքեր, երբ մի քանի յղիութիւնների ընթացքում կարելի է հասկանալի կերպով հետևել առանձնայատուկ բժշկութեան ժամանակին կամ անպատեհ ներգործութիւնը։

Եւ ինչ ենք մենք այստեղ տեսնում։

Ահա ինչ. այն յղիութիւնները, որոնք լինում են մինչև բժշկութիւնը, վերջանում են վատ վիժումով, մեռած պտուղով կամ թէ անկենսունակ երեխաներով. որոնք իսկոյն և մեռնում են և այլն. բոլորովին հակառակը—այն յղիութիւնները, որոնցից առաջ եղել է բժշկութիւն, հասունանում են իւր ժամանակին և տալիս կենսունակ երեխաներ։

Մեծ թուով նոյնանման դէպքեր հաւաքված են և յայտնի գիտնական աշխատութիւններում։ Կը բերեմ

երեք աւելի բնորոշ օրինակներ։

Մի բժիշկ, իմ ընկերը, վարակւում է սիֆիլիսով։ Նա պսակւում է՝ մի կերպ բժշկւելով կամ աւելի ճիշտօրէն, բոլորովին չբժշկւած։ Նորա կինը մնալով առողջ, երեք անգամ յղիանում է և երեք անգամ էլ վիժում։ Ամուսինները չեն կարող խելք խելքի տալ և հասկանալ, թէ ինչից է այդ պատահել։ Եւ ահա մարդու յիշողութեան մէջ վերականգնում է անցեալն իր սիֆիլիսի մասին. այդ միտքը սկսում է նորան անհանգստացնել և նա սկսում է բժշկւել, այս անգամ երկար ժամանակ և լուրջ կերպով. Լինում են նորից երեք յղիութիւններ, որոնցից ծնւում են առողջ և կենդանի երեխաներ, նոքա այժմ 6, 5 և 4 տարեկաններ են։

Երկրորդ դէպքը, որը բարեբաղդաբար կրկնւում է ոչ յաճախ, հետևեալն է։

Մի երիտասարդ վարակւում է սիֆիլիսով և չի յօժարում անել սնդիկի բժշկութիւն, որովհետև նորա ասելով «սնդիկը հասցնում է մազերի և ատամների թափւելուն»։—Մի տարուց յետոյ նա աններելի սխալ է գործում և պսակւում է։ Երեք ամիս անցած նրա կնոջ մօտ երևում են ընդհանուր վաղ սիֆիլիսի նշաններ։

Այնուհետև լինում են հինգ յղիութիւններ հետևեալ վախճանով. առաջինը վերջանում է վիժումով, իսկ չորս հետևեալները կենդանի երեխաների ծննդաբերութեամբ։ Բայց նոքա բոլորեքեան մեռնում են սիֆիլիսից իրենց կեանքի երկրորդ և երրորդ շաբաթուայ ընթացքում։ Այստեղ միայն մարդ ու կին, պարզ տեսնելով թէ բանը ինչումն է. սկսում են բժշկւել սնդիկով և չեն թողնում այդ բժշկութիւնը մի քանի տարւայ ընթացքում։ Հետևեալ երեք յղիութիւնները վերջանում են առողջ երեխաների ծնունդով։ Երեխաները մինչև օրս



էլ մնում են առողջ։

Ահա ձեզ նոյնանման մի դէպք էլ. կարող եմ ձեզ երաշխաւորել այդ դէպքի ամենամանրամասն իսկութեան համար, որովհետև խօսքն այստեղ ինձ շատ մօտ մարդկանց մի ընտանիքի մասին է, որոնց ես բժշկում եմ մի քանի տարի շարունակ և նոցա բոլոր հիւանդութիւնները ինձ լաւ ծանօթ են։

Ես դեռ այն ժամանակ բոլորովին երիտասարդ բժիշկ էի։ Պատահում եմ մի օր իմ աշակերտական նստարանի վաղեմի ընկերին, որին ես վաղուց չէի տեսել։ Խօսեցինք և նա ինձ յայտնեց իր վիշտը. «ես յուսահատւած եմ, ասաց նա, այս առաւօտ կինս վիժեց, և սա չորրորդ անգամն է. և այն է ամենասարսափելին, որ անկարելի է լինում բացատրել, թէ ինչից է այդ պատահում։ Ոչ մի անգամ չի եղել նոյնիսկ չնչին առիթ, ինչպէս օր. վայր ընկնել, մի որևիցէ անզգուշութիւն և այլն։

Ես էլ մեղաւոր չեմ. կարծեօք ևս շատ պինդ եմ և պէտք է որ յոյս ունենայի ժառանգութեան վրայ, բայց արի և տես։ Հաւանական է, որ պատճառը էլի կնոջս մէջն է, թէպէտ և նա գէր կին է, պինդ և լաւ կազմուածք ունի։ Եւ ահա, որքան էլ ցաւալի է, բայց և այնպէս, պէտք է ըստ երևոյթին, հրաժարվել երբևիցէ երեխաներ ունենալու յոյսից»։

Այստեղ ես յիշում եմ այն, ինչ որ ասում էի նրան. «գուցէ դու սխալւում ես իմ սիրելիս, և զուր տեղը կնոջդ մեղադրում. գուցէ նա չէ այդ բոլոր վիժումների պատճառը. հապա ինչ կը լինի, եթէ պարզվի, որ դու ես մեղաւորը։ Չէ որ ես իմանում եմ, որ մի քանի տարի առաջ, քո ուսանողութեան ժամանակ, դու հիւանդ էիր իսկական սիֆիլիսով, որը, կարծեօք, քեզ

շատ էլ հոգս չէր պատճառում և դու վատ էիր բժշկվում։ Եթէ ես քո տեղը լինէի, ես նորից կը վերցնէի սնդիկը և երկար ժամանակ կը գործածէի»։

Այդ խորհուրդը, որ տրված էր այնպէս անցողական կերպով, փողոցում, այնու ամենայնիւ, զուր չանցաւ և իմ ընկերը դիմեց առանձնայատուկ բժշկութեան։ Բաժանվելով ինձանից, նա վազեց իւր վաղեմի ծանօթ մի դեղագործի մօտ և մեծ քանակութեան բիկօրի սնդիկի հաբեր վերցրեց։ Ամբողջ տարին նա կուլ էր տալիս այդ հաբերը։ Իսկ դորանից մի տարի և երեք ամիս անցած նրա կինը իւր ժամանակին ծնեց մի կենդանի երեխայ, որը հասել է ներկայումս յաջողութեամբ 30 տարեկան հասակի։ Դորանից յետոյ էլ նա ծնել է զարձեալ երեք անգամ և ամեն անգամ էլ յաջողութեամբ։

Ահա ուրեմն, չորս վիժում մինչև բժշկվելը և չորս կանոնաւոր յղութիւններ բժշկութիւնից յետոյ։

Այստեղ ոչինչ չկայ աւելացնելու և մեկնութիւն տալու համար։

IV. Բայց աւելին կասէ մեզ չորրորդ ապացոյցը, որը ես հիմայ կը բերեմ։ Նա միանգամայն համոզեցուցիչ է իւր, գրեթէ, թուաբանական ճշտութեամբ. պէտք է լաւ մտածել և հասկանալ։ Մինչև անգամ առանձնայատուկ բժշկութեան ժամանակաւոր, միմիայն ժամանակաւոր ազդեցութիւնը, կարող է, երբեմն, նոյնպէս առժամանակ, կապել և ոչնչացնել սիֆիլիսի վնասակար ազդեցութիւնը ժառանգականութեան վրայ։

Այսպէս օրինակ, որպէսզի ծնվի սիֆիլիս ունեցող ծնողներից առողջ երեխայ, երբեմն բաւական է միայն որ ծնողները գտնվեն սնդիկի բժշկութեան ազդեցութեան ներքոյ, հէնց յղութեան սկզբում։ Որ-



քան էլ այդ տարօրինակ է, և հակաճառ, ու մինչև անգամ առաջին հայեացքից անբացատրելի, բայց և այնպէս, այդ իսկապէս այդպէս է։ Այդ պարզվում է բոլորովին ակնյայտնի կերպով մի շարք դիտողութիւններով, միանգամայն ճիշտ և լաւ վերստուգված։

Ահա, օրինակ, հետևեալ յայտնի դէպքը, որը հրատարակել էր Տուրմանը (Շենֆելդից). դէպքը, դիտողութեան իսկական տեսակէտից, համարվում է օրինակելի։

«Մի սիֆիլիս ունեցող կնոջ մօտ եղել են եօթ յղութիւններ իրար ետևից։ Բոլոր այդ ժամանակը նա չէր բժշկվում։ Եօթն անգամ նորա մօտ ծնվում են երեխաներ սիֆիլիսի նշաններով և երկար չէին ապրում։ Ութերորդ և իններորդ յղութեան ժամանակ նա բժշկվում էր և ծնված երեխաները բոլորովին առողջ էին։ Հասաւ տասներորդ յղութիւնը. համարելով իրան արդէն բժշկված և առողջ, հիւանդը չըվերանորոգեց բժշկութիւնը և ծնեց մի երեխայ սիֆիլիսով, որն ապրեց միայն 1/2 տարի։ Վերջապէս նա յղացաւ տասնմէկերորդ անգամ, էլի բժշկվեց և ծնեց առողջ երեխայ»։

Չէր կարելի հնարել, մտածել աւելի ապացուցիչ դիտողութիւն, քան այս։ Այս բոլորը տրամաբանօրէն հասցնում է մի եզրակացութեան։ Եւ այդ եզրակացութիւնը ամենավճռողական կերպով հաստատում է սնդիկի նախապաշտպանողական ազդեցութիւնը սիֆիլիսի յետագայ զարգացման վրայ։ [illegible] պէտք է աշխատենք մեր ույժերը [illegible] սնդիկի հր[illegible] նորը օգտվէն սնդիկի հր[illegible] թիւններով։

ՅԻՇԱՏԱԿ ԽՈՂԱԲԵՐ ՄԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻՆ

## ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՑ

Կարելի՞ է այնպէս բժշկել սիֆիլիսը, որ նա ապագայում չարտայայտուի հիւանդի ընտանիքի, նորա կնոջ և երեխաների վրայ։

Պարզելով առաջին հարցը, թէ բժշկելի՞ է արդեօք սիֆիլիսը անհատական տեսակէտից և արդեօք կարելի՞ է բժշկութիւնով պաշտպանել իւր անձը սիֆիլիսի պատահարներից,—ամեն մի բարեխիղճ մարդ, որն անբաղդութիւն է ունեցել վարակուել սիֆիլիսով, հարց է տալիս իրան, ի հարկէ, և այս մասին, թէ կարելի է սիֆիլիսն այնպէս բժշկել, որ հիւանդութեան վնասակար հետևանքները չարտայայտուին հիւանդի մօտիկ բարեկամների վրայ։ Ուրիշ խօսքով, նա կհարցնի իրան. «կարո՞ղ եմ ես այնպէս բժշկել իմ սիֆիլիսը, որ նա չարտայայտուի իմ ապագայ կնոջ առողջութեան վրայ. Կարո՞ղ եմ ես այնպէս բժշկել իմ հիւանդութիւնը, որ նա չարտայայտուի իմ սերունդի, իմ ապագայ երեխաների վրայ»։ Ահա այս երկու նոր հարցերը պէտք է մենք այժմ քննենք։

I. Երբեմն,—թէ երբ իսկապէս, այդ ես իսկոյն կասեմ—սիֆիլիս ունեցողի կինը կարող է շատ հեշտութեամբ մարդուց վարակուել։ Եւ այդ պատահում է մինչև անգամ աւելի յաճախ, քան կարելի է սպասել, և աւելի յաճախ քան ընդունուած է մտածել առհասարակ։ Դրան ես կարող եմ շատ որոշ կերպով պատասխանել, քանի որ վաղուց է, որ ես ուշադրութեամբ զբաղվում եմ այդ հարցով։

Եւ արդարև, իմ մասնաւոր պրակտիկում վաղուց է արդէն, որ պաշած եմ սիֆիլիսի վարակման յաճա-



խակի լինելուց օրինաւոր կանանց մէջ, այսպէս կոչված, լաւ հասարակութեան մէջ։ Եւ ահա մի քանի անգամ, 25 տարի առաջ ես կամեցայ վերստուգել իմ ընդհանուր տպաւորութիւնը այդ տեսակ ամուսնական վարակումների յաճախ լինելու վերաբերմամբ, և ստանալ որքան կարելի է ճիշտ տեղեկութիւններ նրա քանակութեան մասին, համեմատելով ամուսնական վարակումը ուրիշ ճանապարհներով ստացածների հետ։ Թողնելով մանրամասնութիւնը, միայն կասեմ, որ ես ամեն ինչ արեցի, որ խուսափեմ սխալներից, որ հնարաւոր է այստեղ, հաշուի մէջ։ Պարապելով մեծ զգուշութեամբ, ես, կարծում եմ, վերջի վերջոյ եկայ ճշտութեան՝ կողմից անվիճելի եզրակացութիւնների. նոքա բոլորովին համաձայն են նոյնանման հաշիւների հետ, որոնք ես կատարեցի յետոյ միևնոյն ուղղութիւնով։ Եւ այսպէս ահա թէ ինչ ստացայ վերջ ի վերջոյ

Թուերի փոխադարձ յարաբերութիւնը իսկապէս զարմանալի է. խնդրեմ մտքներդ լաւ պահէք։ Լսեցէք ուրեմն։

Ամեն մի հարիւր կանանցից—զանազան դասակարգի և դիրքի—որոնք բժշկվում էին սիֆիլիսի եղած կամ ներկայ արտայայտութիւնների առիթով, միջին թուով քանին ամուսնացած էին և ստացել էին սիֆիլիս իւրեանց ամուսիններից։ (Աւելի ճիշտ լինելու համար ես մտցրել եմ ստատիստիկայում միայն այնպիսի դէպքեր, որոնց ճշտութիւնը հաստատուած է ամուսինի խոստովանքով և ցուցմունքով)։

Մի րոպէ մտածեցէք՝ քանի՞ հարիւրի վրայ, այսինքն պսակված կանանց հինգերորդ մասը սիֆիլիս ունեցողներից վարակվում է ամուսնութեան ժամանակ, այսպէս ասած, ամուսնութիւնից։ Թիւը մեծ է և ցա-

ւալ։ Եւ որքան տխրալի է նա, բայց և այնպէս ես հաստատում եմ, որ դա իրականապէս այդպէս է. Իմ հաշիւններս կազմված են մեծ զգուշութեամբ, այնպէս որ մինչև անգամ, գուցէ, առացել եմ աւելի փոքր թիւ, քան իսկապէս պէտք է լինէր։ Այս առաջին փաստը, որ պէտք է մտքերում պահել։

Ի՞նչպէս է սիֆիլիսը փոխվում ամուսնութեան ժամանակ։

Երկու ճանապարհով. կամ անմիջապէս վարակիչ թոյնն անցնում է մարդուց, կամ թէ թափանցում է կնոջ և մօր օրգանիզմը յղութեան ժամանակ, պտուղի միջոցով։ Վարակման այդ երկու ձևերի յաճախակի լինելը միշտ միանման չէ։ Առաջինը—ամենասովորականն է, երկրորդը կազմում է համեմատաբար բացառութիւն։

Առաջին դէպքում բանը այսպէս է լինում. ամուսինը, սիֆիլիսով վարակված, պսակվում է շատ վաղ, նրա մօտ ամենայաճախը պսակից յետոյ շուտով արտայայտվում են հիւանդութեան երկրորդ (վաղ, ընդհանուր) շրջանի նշանները սեռական օրգանների վրայ, կամ բերանի խոռոչում։ Եւ հէնց դրանից էլ վարակվում է կինը։ Այդ բոլորը շատ հասարակ կերպով է լինում և կրկնվում է ամեն մի քայլափոխում։ Այստեղ գլխամաս պէտք է կանգ առնել մի հանգամանքի վրայ, որը զուրկ չէ առօրեայ նշանակութիւնից։

Բանը նրանումն է, որ հիւանդութեան այդ տեսակի վարակումը, կարող է պատահել հիւանդութեան սկզբից շատ ժամանակ անցնելուց յետոյ, օրինակ առաջին շանկրի երևալուց 6-8 տարի յետոյ, և կամ աւելի ուշ; ու դա լինում է անգամ ամուսնական վարակումների աղբիւր։ Որ այդ կարող է լինել, ես դեռ մօտ ժամանակում մատնանիշ արեցի։



Օրինակի համար առաջ բերեմ երկու դէպք.

1) Մի երիտասարդ, վեց տարի առաջ վարակվելով սիֆիլիսով, անզգուշութիւն ունեցաւ յարաբերութիւն ունենալ իւր կնոջ հետ, չընայած, որ այդ միջոցին սեռական անդամի վրայ մի քերծուածք կար. խորհուրդ չընհարցնելով բժշկից, ինքը վճռեց, որ այդ միայն պարզ «ճանկռուածք է»։ Մի քանի շաբաթից յետոյ կնոջ մօտ ցածում երևաց մի մեծ պզուկ, որին հետևեցին շուտով սիֆիլիսի զանազան ընդհանուր նշանները։

2 դէպքը։ Սիֆիլիսը պատահել է 17 տարի առաջ։ Հիւանդութեան ձեն անդրադարձող է, այսինքն այն տեսակի սիֆիլիս է, որը չլինելով իսկապէս ծանր, անընդհատ կերպով արտայայտվում է մի ամբողջ շարք յաւորակի նշաններով։ Մեր հիւանդի մօտ, շնորհիւ նորա շատ ծխելուն, միշտ սիֆիլիսի երևոյթները զարգանում էին լեզուի վրայ. քանի անգամ, եթէ ոչ քառասուն, ես զգուշացրել էի հիւանդին, որ նա վտանգի է ենթարկում՝ իւր այդ հիւանդոտ երևոյթներով վարակելու կնոջը. «տեսէք, այդ բանը վատ կըվերջանայ, ասում էի նրան, երբևիցէ ձեր բերանի այդ ոչնչացող երևոյթները կըդառնան աղբիւր ձեր կնոջը վարակելու համար»։ Եւ, իսկապէս, դժբախտութիւնը պատահեց հէնց այնպէս, ինչպէս ես նախագուշակում էի։ Երեք թէ չորս շաբաթ անցած այդպիսի խօսակցութիւնից յետոյ, նա բերեց ինձ մօտ իւր կնոջը։ Նորա վերևի շրթունքի վրայ գտնվեց մի չնչին քերծուածք. որին հետևեցին սիֆիլիսի սովորական նշանները։ բացի դորանից զարգացաւ տիպիկական շանկր, որին

Պէտք է նկատել, որ այստեղ, այդպիսի ուշ վարակումների ժամանակ, թոյնը փոխվում է աւելի յաճախ բերանի միջոցով, ծխելուց առաջացած գրգռման շնորհիւ

Հէնց այդ ծխելն է առաջացնում բերանի խոռչում սիֆիլիսի զանազան երկրորդական նշանները։

Վարակման երկրորդ միջոցը—դա, այսպէս կոչված, յղիութեան սիֆիլիսն է, երբ հիւանդութիւնը պտուղից մօրն է անցնում։ Պտուղը, յղացած հօր սիֆիլիսից, տալիս է թոյնը մօրը հէնց նրա արգանդում։ Այս հիւանդութեան փոխվելու յատուկ ձևը, ինչպէս ես ասացի, յաճախ չի պատահում, բայց և այնպէս լինում է, և, իրականապէս, գոյութիւն ունի։

Եւ ահա այսպիսի կանանց շարքում, որոնք վարակվել են երկու միջոցներից այս թէ այն կերպով, դուք կըպատահէք և շատ ուրիշների, որոնք սիֆիլիսից խուսափել են, թէպէտ երկար ժամանակ ապրել են սիֆիլիս ունեցողների հետ և, նոյնիսկ, ունեցել են մէկ կամ մի քանի երեխաներ։ Այդ ինչ է նշանակում։ Ո՞րտեղից է այդպիսի տարբերութիւն թէ մէկերի և միւսների մէջ։ Որոնեցէք և դուք շատ շուտ կըհասկանաք թէ բանը ինչումն է. առաջինների ամուսինները անփորձ, անհոգ մարդիկ էին, գուցէ և անտեղեակ, բայց յամենայն դէպս մեղաւոր են նրանում, որ ժամանակից առաջ ամուսնացել են նախապէս չըմաքրելով իրանց անձը ախտից, որը, կարծես, պէտք էր զսպէր նոցա այդ քայլից. իսկ միւսները, ընդհակառակը, ամուսնացել են այնպիսի անձնաւորութիւնների հետ, որոնք մեծ բարեխղճութեամբ վերաբերվելով դէպի իրանց, նախ քան ամուսնանալն սպասել են, մինչև որ իրանք անվնաս կըդառնան ինչպէս իրենց կնոջ նոյնպէս և ապագայ սերունդի համար։

Կարիք չըկայ այն կանանց առողջութեան մասին բերել օրինակներ, որոնք եղել են սիֆիլիսով վարակվածների, բայց լաւ բժշկվածների տիկիններ։ Բարե-



բախտաբար դա կազմում է ընդհանուր կանոն։ Ես կարող էի ցոյց տալ այդպիսի հարիւրաւոր դէպքեր, բայց, ակնյայտնի է, որ փաստերը, որոնք կրկնվում են, այսպէս ասած, ամէն քայլափոխում, կարիք չունեն ապացոյցների. բաւական է միայն մատնանիշ անել։ Ես այդ պատճառով ես սահմանափակվում եմ միայն ընդհանուր եզրակացութիւններով։

Ամէն մի սիֆիլիսով վարակված, չնորհիւ բժշկութեան ժամանակին կարող է ապահովացնել իւր անձը ամուսնութեան մէջ և այդ հիւանդութեան վտանգների առաջն առնել կնոջ և իր երեխաների մօր վերաբերմամբ։

Ուրեմն նշանակում է՝

Սիֆիլիսը բժշկելի է և կարելի նրա այն հետեւանքների առաջն առնել, որոնք սպառնում են կնօջը և մօրը։

## ԵՐՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՀԱՐՑԸ

Կարելի՞ է արդեօք այնպէս բժշկել սիֆիլիսը, որ նա չարտայայտվէր երեխաների վրայ և չըվնասէր նոցա։

Կարիք չըկայ յիշեցնելու այն վնասի մասին, որ հասցնում է սիֆիլիսի ժառանգական փոխվելը։ Կարճ խօսքերով, հետեւեալն է ասացվում. երեխայ զոհերի անթիւ քանակութիւն։ Շատերը ոչնչանում են դեռ չըծնված (սիֆիլիսից վիժումների յաճախ լինելը շատ և շատ մեծ է), միւսները ծնված րոպէից դառնում են անկենսունակ և մեռնում են հէնց առաջին շաբաթներում կամ ամիսներում, իսկ ոմանք կորչում են կռվելով անյաջող սիֆիլիսի դէմ։—Սակայն կան և այնպիսիները,

որոնք ապրում են և դժբաղդ կեանք են վարում. Նրանց մօտ նկատւում են օրգանական թերութիւններ նոյն առանձնայատուկ ժառանգականութեան հողի վրայ. պակաս կենսունակութիւն, գեղձախտ, տրամադրութիւն դէպի անգղիական հիւանդութիւնը, երեխաների ուշացած, արատաւոր զարգացումն և վատ աճումն, մարմնական զանազան և շատ տարբեր թերութիւններ. զարգացման արատներ, որոնք իրարից զանազանւում են ըստ տեսքի և դիրքի, հասնելով ոչ պակաս այլանդակութեան. օրգանական այլասերումն—մտաւոր և բարոյական և այլն։

Եւ աչքի առաջ ունենալով այդ բոլորը, ես հարցնում եմ կրկին—և այս անգամ վերջին անգամ—բժշկելի՞ է այդ բոլորը. այսինքն կարելի՞ է այդ բոլորի առաջն առնել և նախապաշտպանել այդ սարսափներից սիֆիլիսով վարակվածի ապագայ սերունդը։

Ի հարկէ—այո, կըպատասխանեմ ես։ Եւ հէնց այստեղ. աւելի քան մի ուրիշ տեղ, արտայայտւում է բժշկութեան մեծութիւնը իւր ամբողջ փայլով։ Ի հաստատումն իմ խօսքերի ես կարող էի բերել շատ վկաների ցուցմունքներ, բայց ես անկարող եմ թւել բոլորին այստեղ և այդ պատճառով կըբաւականանամ չորս հետևեալ օրինակներով։ Ես ենթադրում եմ, որ նոքա ձեզ համար կըլինեն համոզեցուցիչ։

I. Ենթադրենք, որ մեր առաջ գտնվում է մի յղի կին, սիֆիլիսով վարակված, նրա յղութիւնը կախում ունենալով լոկ միայն իւր առանձնայատուկ հիւանդութիւնից, սպառնում է ընդհատվել ժամանակից առաջ։

Ի՞նչ է հրամայում մեզ անել փորձը, վտանգից ազատվելու և վիժումի առաջն առնելու համար։ Ի՞նչ բանի՞ հարկաւոր է դիմել։ Ի հարկէ սնդիկին, անկաս-



կած սնդիկին։ Հարիւր բժշկից հարիւրը կանգ կառնեն այդ ընտրութեան վրայ և կըհաւատան հէնց այդ միջոցին. և այդ կանեն նոքա, ոչ միայն նրա համար, որ այսպէս ասում են հեղինակաւորները, որ դա մեր դասակարգի աւանդութեան և բժշկական սովորութիւնների արդիւնքն է, ոչ—նոցա այդ բանին սեփական փորձն է սովորեցնում։ Բանը նրանումն է, որ չկայ մի բժիշկ, որը անձամբ սեփական աչքերով չըհամոզուէր գոնէ մի անգամ, որ սնդիկը ազատում է և նախապաշտպանում յղիութիւնը սպառնացող վտանգից, ինչպէս օրինակ յղութեան ընթացքի երկրորդ կիսում։

II. Աւելին կասեմ։ Այդպիսի դէպքերում երբեմն սնդիկը փրկում է անյուսալի դրութիւնից և իսկական հրաշքներ է գործում։ Դատեցէք հետևեալ դէպքի առիթով։ Ես չեմ կարող զուարճութիւն չըպատճառել ինձ պատմելով ինձ այդ մասին. իսկ ձեզ խնդրում եմ լաւ ըմբռնել իմ խօսքերը և ըստ արժանւոյն գնահատել այդ հիւանդութեան պատմութեան բոլոր մանրամասնութիւնները։

Մի քսան տարեկան երիտասարդ կին մտնում է ա. Լիւգովսկի հիւանդանոցը շատ ծանր դրութեան մէջ։ Նախ և առաջ նա ունի սիֆիլիտիկական ցան, որը բաղկացած է խոշոր և մանր հանգոյցներից, որը բառի բուն մտքով ծածկում է նրան գլխից մինչև ոտքը, և կից դորան կայ սիֆիլիսի արտայայտութիւնների մի ամբողջ շարք՝ մեծ խոցեր գլխի մազերի մասում, նշակներում ֆուլերի խոցային քայքայումն, վզի և կոկորդի շուրջի խուլերի ուռուցքը. սեռական ճեղքի մեծացած և միացած թաց բիծեր, ճակատի, սրունքի ոսկորների մաշկոսկորի բորբոքումն և էլի և էլի—բոլորը դժուար է հաշվել։ Երկրորդ—ընդհանուր դրութիւնը շատ էլ լաւ

չէ, թուլութիւնը և ճնշումը, յիշեցնում են այն, ինչ որ տեսնում ենք տիֆի ժամանակ։ Շարունակ ջերմ, որը երեկոյեան սաստկանում է, գլխի խիստ ցաւեր և գիտակցութեան մի տեսակ ընդհանուր բթացում. ախորժակի կատարեալ բացակայութիւն, բայց լեզուն սպիտակ չէ։ Եւ երրորդը՝ վերջապէս, յղութիւն։

Իսկապէս, մի սեռական յարաբերութիւն, որ մինչև այժմ ունեցել է իր կեանքում երեք չորս ամիս առաջ, ընծայել է նորան միանուագ և սիֆիլիս և յղութիւն։ Աղքատութեան պատճառով մինչև այժմ ոչ մի տեղ չէր բժշկվել։ Ուրեմն այստեղ կար ամեն ինչ. և յղութիւն, չարորակի վաղ սիֆիլիս, ծանր ընդհանուր դրութիւն և դրանց հետ միասին հիւանդութիւնը ընթանում է տիֆի նման։

Այո, ես համոզված եմ, որ այդպիսի պայմաններում, ոչ ոք չի գտնվի, որ վստահանար նախագուշակել այդ յղութեան յաջող վերջանալը։ Իմ կողմից, չընայած իմ ամբողջ հաւատին դէպի սնդիկի ույժը, ես էլ չէի կարող սպասել, որ նա կազատէր այս դէպքում ապագայ երեխայի կեանքը։

Եւ սակայն, կարող էք երևակայել, ինչ կատարվեց հէնց սնդիկի շնորհիւ։ Հակառակ սպասածի— վիժումն չեղաւ, հակառակ սպասածի—ծննդաբերութիւնը եղաւ իր ժամանակին, հակառակ սպասածին— երեխան ծնվեց կենդանի և ապրեց, լինելով շարունակ բաւական առողջ։ Եւ, վերջապէս, հակառակ սպասածին—երեխան մնաց խնայված սիֆիլիսից, գոնէ, մինչև վեց ամսական հասակը, երբ, տարաբաղդաբար, մենք կորցրինք նորան մեր աչքից։

Եւ ահա առանց փիլիսոփայութեան ես ասում եմ.— երեխան յղացած է եղել հօրից, որը գտնվում էր



սիֆիլիսի վարակիչ շրջանում, որը և անցել է երեխայի ապագայ մօրը. երեխան զարգանում է մօր արգանդում, որը վարակված է վաղ չարորակի սիֆիլիսով, սորան կից և ջերմ, որը յիշեցնում է տիֆը, և այդ երեխան, չնայած այդ բոլոր սարսափելի պայմաններին, ծնվում է կենդանի և իր ժամանակին, ապրում է, ծաղկում է և գոնէ մինչև կէս տարեկան հասակը չունի սիֆիլիսի ոչ մի նշան. այդ բոլորը ինձ թվում է զարմանալի, անսովորական և հրաշալի։

Եւ որովհետև միանգամայն ակնյայտնի է, որ միայն սնդիկը կատարել է այդ հրաշքը, ուստի ես չեմ կարող չտալ նորան ինչ որ վայել է, և դուք կհասկանաք ի հարկէ, որ ես այդ պատճառով հաւատում եմ այդ միջոցին, նորա հզօր ընդունակութեանը ուղղել ծնողների սիֆիլիսի ժառանգական ներգործութիւնը իրանց սերունդի վրայ։

III. Երրորդ վկայութիւնը յօգուտ այն բանի, որ ես ապացուցանում եմ, հետևեալ սովորական փաստումն է։ Կան կանայք, որոնք սկզբում ունենում են յղութիւններ մի ամբողջ շարք և նոքա բոլորեքեան առանց բացառութեան կամ վիժում են կամ ծնում են մեռածներ, կամ թէ շատ նիհար արարածներ, որոնք շուտով ոչնչանում են։ Սկսում են փնտռել այդ երևոյթների պատճառները, և դա գտնում են ամուսնու կամ կնոջ սիֆիլիսում կամ երկուսինը միասին (այդ միևնոյն է)։—Այն ժամանակ սկսվում է՝ քիչ թէ շատ երկար՝ սնդիկի բժշկութիւնը։—Եւ ահա դորանից յետոյ նոյն կինը յղիանում է, որն ընթանում է կանոնաւոր կերպով և վերջանում է առողջ երեխաների ծննդաբերութեամբ։

Կրկնում եմ էլի մի անգամ, որ այդպիսի դէպքեր շատ և շատ են, բայց որովհետև ուրիշ առիթով ես

բերել էի արդէն նոյնանման օրինակ, այժմ չեմ ուզում կրկնել։ Բայց ես կամենում եմ մատնանիշ անել այն բանի վրայ, ինչ որ այս րոպէին մեզ զբաղեցնում է. այսինքն, որ անդիկի բժշկութեան այդ ուղղիչ, ոչնչացնող, ընդհատող ներգործութիւնը սիֆիլիսի ժառանգականութեան վրայ, արտայայտվում է ժառանգականութեան բոլոր հնարաւոր պայմաններում, անկախ ուրեմն այն աղբիւրից, որտեղից նա վերցնում է իւր սկիզբը՝ գալիս է արդեօք վարակաթոյնը հօրից կամ մօրից, կամ երկուսից միասին։ Այդ երևում է հետևեալից։

1. Ինչ որ վերաբերվում է ժառանգականութեան հօր կողմից, դրան թոյլ տուէք միացնել արդէն առաջ բերած դէպքերին կրկին երկու հետևանքներ, որոնք յայտնի են վիժումի մեծ քանակութեամբ։

Մի առողջ կին, ունենալով սիֆիլիսոտ ամուսին, հինգ անգամ յղիանում է և հինգ անգամ էլ վիժում։ Այդ վիժումների պատճառը մնում էր անբացատրելի։ Վերջ իվերջոյ ծագեց ենթադրութիւն, որ կարող է լինել մեղաւորը ամուսնու սիֆիլիսը, և նորան նշանակվեց առանձնայատուկ բժշկութիւն։ Դորանից յետոյ եղան վեցերորդ և եօթներորդ յղութիւնները, որոնք վերջացան առողջ և կենդանի երեխաների բոլորովին կանոնաւոր ծննդաբերութեամբ։

Մի երիտասարդ պարոն ամուսնանում է երկու տարի անցած, ինչպէս ստացել էր սիֆիլիս, որից միայն երկու ամիս էր բժշկվել։ Նորա կինը մնում է առողջ և յղիանում է վեց անգամ իրար ետևից. և վեց անգամն էլ վիժում է։—Այն ժամանակ և ամուսինը և կինը (թէպէտ և առողջ) սկսում են խառն բժշկութիւն (անդիկ և եօդ) և այդ չարունակում են ամբողջ տարին։ Մի տարի



անցած նոր յղութիւն, և վերջը առողջ ու կենդանի երեխայ։

2. Երկրորդ. բժշկութիւնը նոյնպէս հեռացնում է ժառանգականութիւնը մօր կողմից։

Օրինակներ.

Սիֆիլիս ունեցող կինը ամուսնանում է առողջ մարդու հետ։ 1885 թ. նա ծնում է սիֆիլիսոտ մանուկ, որ ապրել է երեք ամսից ոչ աւել։ Նոր յղութիւնը 1886 թւին, ես նորան բժշկում եմ չատ եռանդոտ կերպով ամբողջ յղութեան չրջանում։ Եւ բանից դուրս է գալիս, որ ժամանակին ծնվում է առողջ երեխայ։

Մի կին վարակվում է սիֆիլիսով իւր առաջին ամուսնուց և թեթև կերպով բժշկվում։ Այրիացած նա երկրորդ անգամ պսակվում է մի առողջ մարդու հետ և նրանից յղիանում է մի քանի անգամ։ Երեխաները կամ արգանդումն են մեռնում կամ սիֆիլիսի նշաններով են ծնվում։—Եւ դորանից յետոյ կրկին երեք անգամ յղիանում է և ունենում երեք կենդանի ու առողջ երեխաներ։

3. Նոյնը կարելի է ասել նաև կրկնակի ժառանգականութեան մասին։ Այսպէս.

Մի երիտասարդ հիւանդանում է սիֆիլիսով 1862 թ., պսակվում է 1865 թ. իսկ այդ ժամանակամիջոցում չատ քիչ է բժշկվում։ Լինում է երկու յղութիւն, որոնք ի հարկէ վերջանում են վատ, առաջինը վիժումով, իսկ երկրորդը վաղածին սիֆիլիսոտ երեխայով, որը ապրեց միայն մի քանի չաբաթ։ Այրիացած, նա երկրորդ անգամ է ամուսնանում 1872 թ.։ Նորա կինը իսկոյն վիժեց և յետոյ նրա մօտ երևացին երկրորդական սիֆիլիսի նշաններ։ Յետոյ սիֆիլիսից առաջ եկած վիժում։ Այն ժամանակ երկու ամուսիններն էլ սկսեցին բժշկվել։ 77 և

80 թ. երկու յաջող յղութիւն, որից ծնվեցան երկու առողջ երեխաներ։ Ի՞նչ կայ աւելի պերճախօս քան այս բոլորը։

IV. Ո՛չ, կան աւելի լաւ փաստեր, աւելի համոզեցուցիչ. դա այն հետաքրքիր երեւոյթն է, որը ձեզ արդէն յայտնի է, այսինքն բարեյաջող և անյաջող յղութիւնների չարունակ փոփոխութիւն, որը կախված է նորանից, թէ եղել է առաջուց բժշկութիւն կամ ոչ։ Օրինակ,—ես չեմ վախենում ձեզ յոգնեցնել կրկնութիւններով,—մի սիֆիլիս ունեցող կին յղանում է և կանոնաւոր բժշկվում է։ Նա թողնում է բժշկութիւնը. և այն ժամանակ նոր յղութիւն, որը այս անգամ սակայն ընդհատվում է վիժումով, կամ ծնում սիֆիլիսոտ երեխայ—Նորից բժշկութիւն և նորից յղութիւն՝ հաջուով երրորդը, որը կանոնաւոր է ընթանում։ Հետեւանքը—առողջ երեխայ։

Ուրեմն, բաւական է մինչև անգամ ժամանակաւոր յատուկ բժշկութեան միայն ժամանակաւոր ազդեցութիւնը, որ առժամանակ ոչնչանայ սիֆիլիտիկական ժառանգականութեան ներգործութիւնը։ Այո, կրկնում եմ կրկին մի անգամ, որպէսզի յղութիւնը ընթանայ յաջող և վերջանայ ժամանակին առողջ երեխայի ծննդաբերութեամբ, բաւական է կամ, գոնէ, կարող է լինել բաւական, որ սիֆիլիսով վարակված ծնողը կամ ծնողները յղութեան վայրկեանում գտնվեն անդիկի թարմ, դեռ չանցած ներգործութեան տակ։

Այդ նկատված է շատ անգամ։ Եւ այդպիսի դէպքերն այնպիսի տպաւորութիւն են թողնում, որ, կարծես, դիտմամբ նախամտածել են անպատճառ ապացուցանել այն, ինչ որ այստեղ ուզում եմ ցոյց տալ։ Այդ փաստերը այն տեսակ են, որ բաւական է միայն առաջ



բերել, և նրանք արդէն ինքեանք իրանց մասին կըխօսեն։

Եւ այդ պատճառով բնական հետեւանքն այն բանի, ինչու մասին մենք հիմայ խօսեցինք, արդիւնք է անդիկի այդպիսի ուղղիչ և ոչնչացնող ներգործութեան սիֆիլիտիկական ժառանգականութեան վրայ. դա դարձել է մի ամենօրեայ հանգամանք, և մենք հանդիպում ենք մարդկանց, որոնք թէպէտ սիֆիլիտոտների սերունդն են, բայց այնուամենայնիւ ունին բաւականին կամ լաւ առողջութիւն. նոքա նոյնպէս պինդ են ինչպէս և ուրիշները, և բոլորովին կանոնաւոր կազմուածք ունեն թէ մարմնով թէ հոգով և թէ խելքով։ Մի խօսքով—նոքա չունեն առանձին հիւանդոտ նշաններ, ոչ մի բան՝ կասկածելի առողջութեան համար և ժառանգական արատաւորութեան զարգացման ոչ մի նշան։ Այդպիսի մարդկանց համար, կարելի էր իսկապէս ասել, որ յատուկ բժշկութիւնը եղել է դոցա համար մկրտութիւն, որ մաքրել է նոցա նախնական մեղքի ամեն կեղտից։

Վերջացնելով, ես աւելորդ եմ համարում կանգ առնել այն խնդրի վրայ, որ, բժշկութեան մաքրեցուցիչ ազդեցութիւնը ժամանակի մէջ իրեն մի հզօր օգնական ոյժ է գտնում, որովհետև ժամանակն ինքը մի մեծ ամեն ինչ ոչնչացնող ոյժ է, որովհետև նա (թէպէտ և դանդաղ և անդիկից էլ դանդաղ) ուժասպառ է անում, մաքրում, պակասեցնում, և, վերջապէս, նաև բոլորովին ոչնչացնում սիֆիլիսի հզօր ընդունակութիւնը անցնել յղութեան ապագայ պտղին։

Ուրեմն, այդ կրկնակի մաքրելը՝ անդիկով և ժամանակով՝ կազմում են մեր ամենալաւ պաշտպանը սիֆիլիտիկական ժառանգականութեան ներգործութեան

դէմ, իսկական, ճիշտ և անտարակուսելի պաշտպան։ Իմ երկար պրակտիկական փորձը և հմտութիւնը որ ես ձեռք եմ բերել այդ գործում, տալիս են ինձ իրաւունք առանց տարուբերվելու պնդել հետևեալը։

Սնդիկը և ժամանակը միշտ,—չըհաշվելով շատ սակաւ բացառութիւնները,—տալիս են հնարաւորութիւն սիֆիլիս ունեցողին առանց ռիսկի դառնալ ամուսին և հայր։

* * *

Ես վերջացրի։ Աստիճանաբար ինձ յաջողեց հաստատել, որ սիֆիլիսը բժշկվում է շատ անգամ և մինչև անգամ ինչպէս կանոն.—

Որ բժշկելի են հիւանդութեան այն արտայայտութիւնները, որոնք արդէն զարգացել են, և որ հնարաւոր է հեռացնել նոցա հետևանքները.

Որ հնարաւոր է նախապաշտպանել վարակվածին այդ հիւանդութեան այն վտանգներից, որոնք սպառնում են սիֆիլիս ունեցողին անձամբ.

Եւ, որ բժշկութիւնով հնարաւոր է խուսափել նոյնպէս և այն վտանգներից, որոնք սպառնում են վարակվածի կնոջն ու երեխաներին։

Այժմ—իբրև եզրափակութիւն իմ բոլոր ասածների—ես կըկամենայի, ձեզ վերջնականապէս համոզելու նպատակով, ձեռնարկել էլի մի բանի—անկարելիին։

Ես կըցանկանայի, ինչպէս այդ ընդունված է գործնական գիտութիւններում, ազդել ձեզ վրայ տեսանելի օրինակով և ներկայացնել ձեզ ոչ թէ հիւանդներ (ոչ իմ ցանկութիւններս աւելի համեստ են), այլ հիւանդութեան անուանական, իսկական պատմութիւններ. պատմել նրանց մասին, որոնք շատ տարիներ առաջ



ունեցել են սիֆիլիս, և այնքան խոհեմ են եղել, որ բժշկվել են, չեն տեսել իրենց հիւանդութիւնից ոչ մի վատ բան ու ապրել են նրա հետ, այսպէս ասած, կատարեալ խաղաղութեամբ՝ սկսած նրա հէնց առաջին բռնկումներից և սկզբնական շրջանի հարուածներից։

Աւելի պարզ բացատրեմ. ես կըցանկանայի ծանօթացնել ձեզ հիւանդութիւնների անուանական պատմութեան հետ, կամ այնպիսիների հետ, որոնք վարակվելով 20, 30, 40, 50 տարի առաջ, բժշկել են իրենց ցաւը և

1. Չեն նկատել իրանց վրայ՝ անձնական տեսակէտից՝ ցաւի ոչ մի արտայայտութիւն վարակման առաջին տարիներից յետոյ, իսկ երբեմն մինչև անգամ (և դա բաւականին յաճախ) երևալու առաջին տարուանից.

2. Որոնք պսակվել են և նոցա կանայք չեն հիւանդացել.

3. Որոնք ունեցել են երեխաներ, (մէկ, երկու, երեք, չորս, հինգ իսկ երբեմն աւելի շատ) և դրանք միանգամայն զերծ են մնացել հայրական թոյնից՝ թէ մարմնակազմութեան թէ մտաւոր և թէ բարոյական տեսակէտներից։

4. Որոնց մէջ—մի խօսքով—սիֆիլիսը առաջին տարիներից լռել է, պառ մտել, կասես թէ իսկի էլ գոյութիւն չի ունեցել։

Այո, ես կըկամենայի այդ բոլորն էլ ցոյց տալ ձեզ ոչ պակաս քանակութիւնով։ Այդ կարգի տեղեկութիւնները կարող էին համոզել ձեզ, որ սիֆիլիսը բոլորովին այն չէ, ինչ խօսում են նրա մասին մի քանի մռայլ տրամադրված մարդիկ, որոնք յուսահատ կրկնում են, թէ դա խորտակումն է, զարհուրելի է և դժբաղդութիւն՝ ամբողջ կեանքի համար, որ նա անյաղթելի

խոչնդոտներ ունի և բոլոր յոյսերը կարող է կատարելապէս ոչնչացնել, որ նա խլում է ուրախութիւնը և բաղդաւորութիւնը, որ նա մարդու ամբողջ ապագան է արմատից կտրում և այլն և այլն։

Ինձ համար ոչ մի դժուարութիւն չէր լինել ցոյց տալ ձեզ այդ բոլորը, բայց ես անկարող եմ մերկացնել ուրիշների գաղտնիքը և հիւանդների անունները տալ։ Այլ կերպ դուք կըտեսնէիք, որ սիֆիլիսը բոլորովին չի խանգարում մարդկանց եռանդուն կեանք վարել և մինչև անգամ հասնել բարձր աստիճանների, փառքի ու պատուի։

Այդպիսի դէպքեր—մխիթարիչ—ես կարող էի համարել հարիւրներով։ Խօսք տալիս եմ ձեզ, որ նոքա չատ քիչ են կազմում բացառութիւն, որ նոքա յաճախ են լինում։ Թոյլ տուէք ինձ, այնուամենայնիւ, օրինակի համար, ծանօթացնել ձեզ կեանքից վերցրած մի կամ երկու դիւժին այդպիսի արձանագրութիւնների հետ։ Վերցնում եմ այն տեսակներից, որոնք, այսպէս ասած, վերջացրել են իրանց հարկադրեալ պարտքի ժամանակը սիֆիլիսին առնուազն 25 տարուայ ընթացքում։ Ուշադրութիւն դարձրէք այդ ժամանակամիջոցի երկարատևութեան վրայ։

Ահա նոքա՝

I. X... Սիֆիլիս եղել է 1880 թ. այսինքն 25 տարի առաջ։ Արտայայտուեցան՝ միայն հիւանդութեան առաջին տարիներում՝ հետևեալ երևոյթները. կարծր շանկր, բծաւոր ցան և մի քանի թաց թաղանթային բծեր բերանի խոռոչում։ Երկարատև բժշկութիւն։ Ոչ մի բան մինչև այսօր։

II. X... Սիֆիլիս 26 տարուայ ժամանակի։ Հիւանդութեան բոլոր արտայայտութիւնները երևացին



միայն առաջին 6 ամսուայ ընթացքում, և, բացի սկզբնական շանկրից, մնացած երևոյթները եղել են երկրորդ շրջանի լաւորակի նշաններ (բծաւոր ցան, գլխի մազերի մասում խոցեր, վզի լիմֆատիկ խուլերի ուռոյցք և կոկորդի նուշանման խուլերի հիւանդութիւն)։ Բժշկութիւնը երկարատև և կանոնաւոր։ Երեխան չորս տարեկան և առողջ։ Կինը հիւանդութիւնով վարակված չէ։

III. X... Սիֆիլիս, 25 տարուայ ժամանակի․ կարծր շանկր բերանի խոռոչում և յետոյքի ծակում թաղանթային բծեր։ Ցան երբեք չէ եղել։ Սակայն եղել են ջղային թուլութեան նշաններ (նեվրաստենիա), որը տևել է մի քանի տարի։ Երկարատև բժշկութիւնը յաճախ ընդհատվում էր յատուկ նեարդային բժշկութեան հնարաւորութիւն տալու համար։ Եօթն երեխայ, որոնցից մեծը 14 տարեկան է. նոքա բոլորը առողջ են, լաւ կազմուածք ունեն և փայլում են առողջութիւնով․ Կինը վարակված չէ հիւանդութիւնով։

IV. X... Սիֆիլիսը եղել է 25 տարի առաջ։— Նա արտայայտվել է մարմնի վրայ՝ բծերով և բերանի խոռոչում՝ թաղանթային ցանով. այս բոլորը հիւանդութեան առաջին տարուայ ընթացքում։ Միանգամայն ուրիշ ոչի..չ. ընդհանուր դրութիւնը հիանալի է. բժշկութիւնը տևել է մի քանի տարի և վերանորոգվել յետոյ էլի մի քանի անգամ։ Կինը վարակված չէ։ Չորս երեխայ, որոնցից մէկը մեռաւ տիֆից, իսկ երեք մնացածները առողջ են և ոչնչով չեն հիւանդանում։

V. X... Սիֆիլիս 25 տարուայ ժամանակի։ Շանկրից յետոյ, առաջին երկու տարին երևացել են հիւանդութեան մի քանի երկրորդական նշաններ։ Բժշկութիւնը տևել է մի քանի տարի։

VI. X... Այս դիտողութիւնը միանգամայն նման

է նախընթացին։

VII. X... Սիֆիլիս 28 տարուայ ժամանակի։ Չանկր։ Առաջին տարուայ ընթացքում սիֆիլիսի ցանը եղել է հանգոյց—թեփ տուող։ Երկարատեւ բժշկութիւն։ Այն ժամանակից սկսած հիւանդութեան ոչ մի նշան չըկայ։ Ամուսնութիւն։ Կինը վարակված չէ հիւանդութիւնով։ Երեք առողջ երեխաներ։

VIII. X... Սիֆիլիս 29 տարուայ։ Հիւանդութիւնը իր զարգացման առաջին տարուց յետոյ ոչ մի բանով չէ արտայայտվել, երբ չանկրից յետոյ նկատվել են մի քանի մակերեւութական երկրորդական բնաւորութիւն ունեցող ախտեր։ Երկար և կանոնաւոր բժշկութիւն. երեխայ չըկայ. կեանքը աշխատաւոր է և շատ եռանդուն։ Կանգնած է առաջին կարգում իր գործի մասնագէտների մէջ։ Փայլուն ասպարէզ։

IX. X... Բոլորովին նման է նախընթացին։

X. X... Սիֆիլիս եղել է 30 տարի առաջ։ Մի քանի երկրորդական նշաններ (մարմնի վրայ բիծեր, թաղանթային բիծեր բերանի խոռոչում, նոյն տեսակ քերծուածքներ անդամի վրայ, հազիւ նկատելի ցան ձեռքերի բուռերում)։ Այդ բոլորը առաջին չորս տարուայ ընթացքում, իսկ յետոյ ամեն ինչ լռեց։ Երկար բժշկութիւնը շարունակ վերանորոգվում էր ամեն մի անդրադարձից յետոյ։ Երկու առողջ երեխաներ։ Կինը ազատ է մնացել հիւանդութիւնից։

XI. X... Սիֆիլիսը եղել է 34 տարի առաջ։ Ամեն ինչ սահմանափակվեց մի քանի լաւորակ երկրորդական երեւոյթներով առաջին տարուայ ընթացքում։ Երրորդ տարին ձեռների մէջ յատուկ հիւանդութիւն։ Այն օրից այլեւս ոչինչ։—Բժշկութիւնը շատ երկար ժամանակ չէր դադարում։ Երեք առողջ երեխաներ։Կինը նոյնպէս ա-



ռողջ է։ Ինքը շատ պինդ է և վարում է շատ գործունեայ կեանք։

XII. X... Սիֆիլիս, 37 տարուայ ժամանակի։ Առաջին տարուայ ընթացքում մի քանի երկրորդական երեւոյթներ։ Այդ օրուանից ոչինչ այլեւս. միանգամայն ոչինչ կասկածելի։ Եռանդուն բժշկութիւն անմոռանալի ընկեր բժիշկ Պառոի ղեկավարութեամբ։ Հինգ երեխայ. մեծը 30 տարեկան է. բոլորն առողջ են։

XIII. X... Սիֆիլիս եղել է 37 տարի առաջ։ Կարծր չանկր։ Առաջին երկու տարուայ ընթացքում բիծեր մարմնի վրայ և յաճախ անդրադարձում թաղանթային բիծերի՝ բերանի խոռոչում (անուղղելի ծխող), աչքի ծիածանաթաղանթը բաւական վնասված, ձեռքերի մէջ ցան։—Եռանդուն բժշկութիւն. նոյնիսկ երկու անգամ բերանի թաղանթը խիստ վնասված է եղել ծխելից և զարգացել էր ծխելի թունաւորումից։ Այն ժամանակից այլեւս ոչինչ։ Կինը սիֆիլիսով հիւանդ չէ. հինգ առողջ երեխաներ՝ առանց այլասերման որեւէ նշանի։ Այսպէս—երկու աղջկայ մօտ հիանալի առողջ ատամներ։—Կեանքը լի է աշխատանքով։

XIV. X... Սիֆիլիս 39 տարի առաջ, Հիւանդութեան մի քանի թեթեւ երեւոյթներ (բծաւոր և հանգոյցաւոր ցան մաշկի վրայ, նոյնպէս ցան բերնի խոռոչում) առաջին տարիների ընթացքում։ Ոսկրի հաստութիւն չորրորդ տարում։ Երկար բժշկութիւն։ Այլեւս ոչ մի նշան, չընայած որ կեանքը եռուն էր և լի անհանգստութիւններով։

XV. X... Սիֆիլիսը եղել է 41 տարի առաջ։ Կարծր չանկր. մարմնի վրայ բծեր. կրկնակի թաղանթային բծեր բերանի խոռոչում, յօդաւորութեան ջրգողութիւն, երեսի նոյն ծագումով։ Երրորդ տարուանից սկսած հի-

ւանդութիւնը լռեց միանգամայն, չընայած, որ հիւանդը թոյլ կազմուածքի տէր էր առհասարակ և շատ գեղձախտաւոր։ Երկարատև բժշկութիւն։ Երկու առողջ երեխաներ, որոնցից առաջինն ունի հիանալի ատամներ։ Կինը վարակված չէ հիւանդութիւնից։

XVI. X... Եօթանասուն տարեկան ծերունի։ Սիֆիլիսը եղել է 1863 թուին, նշանակում է 42 տարուայ՝ —Սկզբնական վէրքեր և մի քանի թեթև երևոյթներ ընդհանուր երկրորդական սիֆիլիսի։ Եռանդուն բժշկութիւն չորս տարուայ ընթացքում Ռիկօռի ղեկավարութեամբ։—68 թ. անպատեհ ուշացած՝ հիւանդութեան ժամանակին նայած՝ սիֆիլիտիկական շատ մակերևոյթական բծերի երևալը, այսպէս կոչված երրորդական կարմիր ցան (էրիտեմա)։ Նորից բժշկութիւն։ Այն ժամանակուանից այլևս ոչինչ. բոլորովին առողջ է. շատ ուժեղ է։ Չորս առողջ երեխաներ. մէկը նոցանից մեռաւ տենդից. մի աղջիկը ինքն ունի չորս երեխայ, շատ առողջ։ Կինը հիւանդութիւնից խուսափեց։

XVII. X... Սիֆիլիս 47 տարուայ։ Սկզբում սիֆիլիսի մի քանի թեթև երկրորդական երևոյթներ։ Չորրորդ և եօթներորդ տարում՝ հիւանդութեան սկզբից՝ սիֆիլիսի ցան ձեռքերի մէջը։ Այդ անդրադարձումների առիթով բժշկութիւնը շատ անգամ կրկնվում էր։ Հինգ առողջ երեխաներ։ Կինը նոյնպէս առողջ է։

XVIII. X... Եօթանասուն տարեկան ծերունի։ Սիֆիլիսը 48 տարուայ։ Կարծր շանկր. առաջին երկու տարում հիւանդութեան մի քանի հարևանցի արտայայտութիւններ։ Շատ անգամ բժշկութիւնը կրկնվում է։ Երկար ժամանակ անդիկը տրորում էր ջրերում, Ուախաժում։ 46 տարուց ի վեր հիւանդութեան և ոչ մի նշան։ Հիանալի առողջութիւն։ Կեանքը լի է աշխատանքով։



XIX. X... Եօթանասուն տարեկան ծերունի. սիֆիլիսով վարակվել է 49 տարի առաջ։ Կարծր շանկր. բծաւոր ցան։ Առաջին երկու տարուայ ընթացքում յաճախ թաղանթային բծերի անդրադարձումն բերանի խորշում. երկարատև բժշկութիւն։—Այլևս ոչինչ, ահա 47 տարի է։

Պրոֆեսոր Տարանովսկին հաղորդել է նոյնպիսի խրատական դէպք իւր պրակտիկայից։

Հիւանդը, երբ նա 8 տարեկան էր, վարակվեց անմեղների սիֆիլիսով, երբ խաղում էր սիֆիլիսով հիւանդ երեխաների հետ։ Հիւանդութիւնը մի քանի տարի շարունակ յաճախ արտայայտվում էր՝ թէ թարմ և թէ հին ձևերով։ Բայց սկսած 15 տարեկանից մինչև 81 տարին, այսինքն 66 տարուայ ընթացքում, ոչինչ չէր երևում, միանգամայն ոչինչ սիֆիլիտիկական։

«Ներկայումս, ասում է Տարանովսկին,—նա մի լայնաթիկունք, գեղեցիկ ծերունի է, որը պահպանել է ամբողջութեամբ իւր մազերը, ատամները և աչքերը։ Նա թեթև կերպով և շատ է ման գալիս, որսի է գնում և հրացանը ձեռքին երկար ժամերով թափառում է անտառում, ոչ յոգնութիւն ոչ էլ նեղութիւն քաշելով»։

* * *

Ուրեմն իբրև եզրակացութիւն ես կարող եմ ասել.

Սիֆիլիսը բժշկելի է բոլորովին։ Կարելի է առնել նրա այն վտանգների առաջը, որոնք սպառնում են անձնապէս հիւանդին, նոյնպէս կարելի է խուսափել հիւանդութեան ընտանիքին անցնելուց։

Այսպէս է իմ համոզմունքը, որին ես հասայ՝ առանց կանխամտութեան՝ այդ հարցը խնամքով ուսումնասիրելուց յետոյ։ Նոյնը ինձ ասում է իմ բժշկական

առնչութիւնը սիֆիլիսի հետ, իմ սեփական երկարատև գործնական փորձը։ Ճիշտ է, որ չի կապվում այս բոլորը այդ հիւանդութեան վերաբերմամբ եղած այն մռայլ հայեացքների հետ, որ չատերը յաճախ յայտնում են, բայց, եթէ մենք լսենք դատարկախօսներին, որոնք սիրով դատողութիւն են-տալիս ամեն բանի մասին, առանց գաղափար ունենալու, բանից դուրս կըգայ, որ «սիֆիլիսը սարսափելի հիւանդութիւն է, որ նա չի խնայում, երբէք չի անհետանում, երբէք չի բժշկվում, և հալածում է իւր զոհերին մինչև դարերի վերջը»։

Ամեն ոք, որ հիւանդանում է այդ ցաւով, կարծես, պէտք է ամէն յոյս թողնի, ինչպէս Դանտէի նահատակները՝ «թող յոյսդ»։ Բայց չէ որ այդ բոլորը միայն երեւակայութիւն է, զուրկ առողջ դատողութիւնից, իսկ ճշմարտութիւնը—մերկ ճշմարտութիւնը—կրկնում եմ դարձեալ նրանումն է, ինչ որ ես ձեզ նոր հաղորդեցի։

Ի հարկէ—պէտք է աւելացնեմ, հիւանդանալ սիֆիլիսով դժբաղդութիւն է, և դժբաղդութիւն առանց կասկածի։ Բայց չարիքը ուղղելի է և—ճիշտն ասած—չատ քիչ հիւանդութիւններ կան, որտեղ առողջանալը լինի այնքան մատչելի և հասանելի։ Եւ այդ պատճառով այն օրը, երբ մէկին կըպատահի վարակվել և հիւանդանալ սիֆիլիսով, նա պէտք է սառնարիւն և քաջ կերպով կշռէ իրերի դրութիւնը և, չըծածկելով իրանից վտանգները, բայց և միևնոյն ժամանակ չընկնելով փոքրոգութեան մէջ, ասի իրեն. «այս րոպէից ես մահացու կռիւ եմ սկսում իմ նոր թշնամու հետ։ Դէպի առաջ և աւելի քաջութիւն։ Չվախենալ։ Չէ որ գիտութիւնը հաստատում է, որ անդիկի օգնութեամբ, կանոնաւոր կեանք վարելով և ժամանակի ընթացքում սիֆիլիսը յաղթված՝ անհետանում է։



Ուրեմն, գիտութիւնը տալիս է ինձ կենդանարար յոյս, որ կըգայ մի օր և ես կըլինեմ առողջ, ինչպէս և առաջ, մինչև այդ անբաղդութիւնը. որ ես կարող եմ կըստանամ մինչև անգամ իրաւունք լինել ընտանիքի տէր, և ընդմիշտ անյայտացած հիւանդութեան երևոյթը չի խանգարի ինձ լինել բաղդաւոր ամուսին և հայր»։

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻՒՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻՆ

Վերջ

# ՎՐԻՊԱԿՆԵՐ

Գրքոյկի մէջ սպրդել են հետեւեալ տպագրական սխալները

| Երես | Տող | | Տպւած է | Պէտք է լինի |
|---|---|---|---|---|
| 6 | 8 | վեր. | և որոշ պայմաննե-րում, անցնում է | Եւ որոշ պայմաննե-րում անցնում է, |
| 15 | 9 | „ | տաբերութիւնը | տարբերութիւնը |
| 15 | 4 | ներք. | չեն ենթարկվում | չեն ենթարկվում |
| 16 | 15 | վեր. | երոոյթները | երեւոյթները |
| 19 | 3 | „ | խիստ տարածուած է, միացած միմեանց հետ. | խիստ տարածուած է միմեանց հետ միա-ցած ձեւով |
| 22 | 5 | ներք. | կարմրագոյն | կարմրագոյն |
| 26 | 15 | „ | „ | „ |
| 23 | 13 | վեր. | տնհրաժեշտութիւնը | անհրաժեշտութիւնը |
| 32 | 6 | ներք. | երեմն | երբեմն |
| 43 | 9 | „ | ժամոնակ | ժամանակ |
| 54 | 9 | վեր. | հա՛զւագիւտ | հազւագիւտ |
| 58 | 6 | ներք. | կեանք | կեանքի |
| 60 | 12 | „ | չորրոդ | չորրորդ |
| 64 | 3 | „ | անադան | անագան |

Ծախվում է բոլոր գրավաճառների մօտ

Գինն է 35 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0279836

63f9